Ինչքան պաշտոն, աշխատավարձ ու պարգեւավճար է բաժանել ձեզ, երկու այդքան էլ խայտառակել է: Բոլոր առումներով՝ ոլորտ առ ոլորտ, մասնագետ առ մասնագետ, ՔՊ-շնիկ առ ՔՊ-շնիկ: Աշխատել ես Նիկոլի հետ, ուրեմն դավաճան ես, կապիտուլյանտ ես, հողատու ես, ազգակործան պատուհաս ես: Նիկոլից մի քիչ ավել, մի քիչ պակաս:

Կարդացեք՝ էջ 5



Բացի էդ ժեշտի կտորից՝ կա մեծ Հայրենիք, որը մեր սրտի մեջ է, որն էդ ժեշտով չափելի չէ, պատմական է, հոգեւոր է, ուզում է մեր սրտերը մտնի՝ իր անհայրենիք խմբագրումներն անի: Չի ստացվելու: Փաստորեն, այս մարդն ու իր թիմն էկզիստենցիալ, գոյաբանական դավաճանություն են իրականացնում Հայաստանի, հայ ազգի նկատմամբ:

Կարդացեք՝ էջ 7



Պեռաշկի, կուկուռուզ, սուջուխ, կարտոլ շարքի հաջորդը սեմուշկա չրթելն է: Չրթել, թքել գետնին: Թող ժողովուրդը տեսնի, թե ինչ հանգստությամբ եք չրթում, ինչ վստահությամբ: Եվ կհասկանա, որ սրանց դեմ խաղ չկա: Կմտածեն՝ «Սրանք մարդիկ են, որոնք չեն թաքցնում իրենց ուժն ու հունարը», մեզ պես էլ սեմուշկա են չրթում:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 49 (4100), 28 մարտ, շաբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Ինչպես տեսանք, կիրակի օրը ՔՊ երեւանյան քարոզարշավի ընթացքում խայտառակ պատկեր գրանցվեց, երբ ամենուր մերժում ու բոյկոտում էին Փաշինյանին: Քարոզարշավը փրկելու համար, մեր տեղեկություններով, Շենգավիթ վարչական շրջանում ՔՊ-ականներն արագ ինքնակազմակերպվել են եւ օրվա ընթացքում նիկոլական տատիկներ են դուրս բերել փողոց, որ Փաշինյանին մի երկու գովեստի խոսք ասեն: Շենգավիթի բնակիչներից մեկը մեզ պատմեց, որ «ախրաննիկներն» արագընթաց մեքենաներով տատիկների էին բերում Փաշինյանի հետ հանդիպման վայր, ոմանց թեւանցուկ ուղեկցելով: Բնակիչները նաեւ տեսանյութեր ունեն, որոնք փոխանցել են մեզ, սակայն խնդրել են, որ չհրապարակենք՝ իրենց նկատմամբ հնարավոր հաշվեհարդարից խուսափելու համար, որովհետեւ դժվար չի լինի պարզել, թե ով է նկարահանումն արել: Իսկ ՔՊ-ականներն ասում են՝ մենք ձեզ խոսքի ազատություն ենք բերել:

ՔՊ-ն, ընտրություններին ընդառաջ, նախընտրական շտաբների բացման մարաթոն է հայտարարել եւ հանրապետությունով մեկ գրասենյակներ է վարձակալում: Մեզ հասած տեղեկատվությամբ, պատրաստ են շատ մեծ գումարներ ծախսել, որպեսզի իրենց վերարտադրությունն ապահովեն: Դիցուք, Երեւանի կենտրոնում՝ Մաշտոցի պողոտային հարակից հատվածում, շենքերի բակերից մեկում վերջերս շտաբ է բացվել, որի ղեկավարը, ըստ մեր տեղեկությունների, քաղաքապետարանի մի աշխատակից է՝ ակտիվ ՔՊ-ական, որն իր շրջապատում գլուխ է գովել, թե մինչեւ ընտրությունները ամսական 10 միլիոն եւ ավելի դրամ աշխատավարձ է ստանալու: Բայց դրա դիմաց խոստացել է որոշակի թվով ձայներ բերել, ինչը Երեւանի կենտրոնի այս բարդ հատվածում բավականին խրթին հարց է, քանզի ՔՊ-ն այստեղ ձայներ չունի, եւ ամենագիտակից քաղաքացիներն են բնակվում կենտրոնում:

ԱԺ-ն 2 ամսով 2 նոր պատգամավոր կունենա. մեկը՝ ընդդիմադիր, մյուսը՝ իշխանական: ՍԴ գործուղվելուց հետո Վլադիմիր Վարդանյանին ՔՊ ցուցակում կփոխարինի Գեղարքունիքի փոխմարզպետ Վահան Զարոյանը, որը հայտնի է իր հայհոյախառն եւ վիրավորական գրառումներով: Ընդդիմադիր Թադեւոս Ավետիսյանն էլ ընտրվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի անդամ, քանի որ նախկին անդամի՝ Մանվել Բաղալյանի պաշտոնավարման ժամկետը լրացել է: Նրան կփոխարինի «Հայաստան» դաշինքով պատգամավորի թեկնածու առաջադրված Հրաչուհի Միրզոյանը, որը մարկետինգի մասնագետ է, «Ռենշինում» է աշխատում:

Հնարավո՞ր է ներել

Մի կողմից՝ ՔՊ վերնախավն անպատկառ, լկտի, մեծամիտ խոսույթ է կիրառում, մարդկանց վիրավորում, դիպչում նուրբ լարերին, հակահայկական հայտարարություններ անում՝ հանրության նյարդերի հետ խաղալով եւ ի ցույց դնելով իրենց դյուրագրգիռ վիճակը: Մյուս կողմից, հասկանալով, որ ընտրությունները սարերի ետեւում չեն, եւ իրենք հանրության տված քվեից են կախված, փորձում են ներողություններով ու մեղայականներով հարթել իրավիճակը: ՔՊ անդաստիարակների կաստան նոր մշակույթ է, ըստ էության, ներդնում մեզանում. ինչ ասես՝ ասեն, իրենց ոնց ասես՝ պահեն, հանրային վայրերում մարդկանց վիրավորեն, իրավասությունները գերազանցեն, հետո մի կեսբերան ներողություն խնդրեն ու համարեն, որ «միջադեպը հարթված է»: Իսկ հասարակությունը պատրա՞ստ է ներել նրանց այդ ամբարտավան պահվածքը: Եթե անգամ վիրավորանքը հնարավոր է ներել, արդյոք հնարավո՞ր է ներել այն, որ Փաշինյանն ու իր թիմը հայտարարում են, թե արգելում են արցախցիների վերադարձի, Հայոց ցեղասպանության, Արցախի էթնիկ զտման, մեր սուվերեն տարածքներում նստած ադրբեջանական զորքի մասին խոսելն առհասարակ: Իսկ հանրությունը հա՞շտ է այն հայտարարության հետ, որ մենք «2020-ին գիտակցված զոհողության գնացինք, որ ձեռք բերենք պետություն եւ անկախություն»: Իսկ հանրությունը համաձա՞յն է, որ Արցախի ու Արեւմտյան Հայաստանի թեմաները նույնական են, եւ երկուսն էլ պետք է փակված համարենք կամ՝ եթե խոսենք արցախցիների վերադարձի մասին, դրանով դուռ ենք բացում ադրբեջանցիների՝ Հայաստան վերադառնալու համար: Պարզ չէ՞, որ սրա շարունակությունը լինելու է մեր պատմությունն ամբողջությամբ ջնջելը, բոլոր հարցերում զիջումների գնալը: Իսկ եթե հունիսի 7-ին ինչ-որ ձեւով վերարտադրվեն, ապա այս «ներողություն»-ներն էլ այլեւս չեն հնչելու:

Նախընտրական աժիոտաժը չի շրջանցել նաեւ «Լուսավոր Հայաստան» կուսակցությանը: Մեր տեղեկություններով, Էդմոն Մարուքյանի կուսակցությունը ապրիլի 11-ին է արտահերթ համագումարի, որը տեղի կունենա Երեւանի «Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում, ժամը 12:00-ին: Օրակարգում ներառված է երկու հիմնական հարց. նախատեսվում է հաստատել ԱԺ 2026 թվականի ընտրություններին կուսակցության ընտրական ցուցակի առաջին 30 թեկնածուին, ինչպես նաեւ՝ ընդունել կուսակցության նախընտրական ծրագիրը: Ցուցակում տեղ կգտնեն ինչպես ԼՀԿ անդամներ, այնպես էլ հանրային տարբեր ոլորտներում աշխատող անկուսակցականներ, որոնց տեւական ժամանակ հրավիրում են՝ ընտրացուցակում գրանցվելու հայտեր ներկայացնելու: Բնականաբար, ցուցակը կգլխավորի Էդմոն Մարուքյանը, Դավիթ Խաժակյանը կլինի երկրորդը, իսկ առաջին կնոջ հարցում դեռ վերջնական որոշում չկա, ամենայն հավանականությամբ, նա կլինի ՀԿ սեկտորից:

ՈՐՈՇՈՒՄԸ ԶԳԶԳՈՒՄ ԵՆ

«Տաշիր կապիտալը», ինչպես հայտնի է, վարչական դատարան է դիմել եւ վիճարկում է ընկերությանը լիցենզիայից զրկելու որոշումը: Անցած շաբաթ սկսված եւ շուրջ 30 ժամ տեւած դատաքննությունից հետո դատարանը մարտի 26-ին պետք է հրապարակեր որոշումը, սակայն երեկ էլ չհրապարակվեց: Ըստ ամենայնի, ծանրութեթեւ են անում՝ ինչպես ներկայացնել ու հիմնավորել քաղաքական որոշումը, քանի որ դատարանում որեւէ հստակ հիմնավորում չի հնչել: Ավելին՝ դատական նիստի ընթացքում, որպես ապացույց, փորձում էին ներկայացնել դեպքեր, որոնք կատարվել են ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանի ժամանակ: Հիմնավորումների թվում 700 հազար սպառողի տվյալների ոչ ամբողջական հաշվառումն էր, էլեկտրաէներգիայի թերգրանցումները եւ հավելագրումներն էին, միացումների ժամկետների խախտումները, ընդհատումների մասին ոչ հավաստի տեղեկությունը, որոնց համար փաստական հիմքեր չեն նշվել: Այդուհանդերձ, եթե դատարանն անվավեր ճանաչի ՀԾԿՀ-ի՝ ՀԷՑ-ի լիցենզիան դադարեցնելու որոշումը, ապա ավտոմատ դադարում են նաեւ ժամանակավոր կառավարչի լիազորությունները, քանի որ նրա պաշտոնավարումը պայմանավորված է հենց այդ որոշմամբ:

ՆԿԱՐ

ԵՍ ԱՆՆԱՅԻ ՁԵՌՔԸ ՀԱՄԲՈՒՐԵՑԻ, ԱՍԱՑԻ՝ ԿԱՐՈՂ Է ԱՄՈՒՍԻՆԴ ԻՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐԻ

Փաշինյանի նախկին կինը՝ «Իմ քայլը» հիմնադրամի գործադիր տնօրեն Աննա Հակոբյանը, հիմնադրամի փոխտնօրեն Թալին Թոփալաքյանի ուղեկցությամբ, նախօրեին հյուրընկալվել էր ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Լեւոն Թոքմաջյանին՝ նրա արվեստանոցում, որտեղ բնորդուհու դեր էր կատարել. Թոքմաջյանը նրան նկարել էր: Նշել էին, որ այցը տեղի է ունեցել վարպետի հրավերով՝ «Կրթվելը նորաձեւ է» շարժման շրջանակում: Երեկվանից համացանցը քննարկում է Հակոբյանի դիմանկարը, որը դուր չի եկել հանրությանը: Մարդիկ ծաղրում են, գրում, որ լուսանկարը ոչ մի նմանություն չունի Աննա Հակոբյանի հետ եւ այլն: «Հրապարակը» զրուցել է **Լեւոն Թոքմաջյանի** հետ, որը մինչ այս հայտնի էր որպես քանդակագործ, իսկ այժմ նաեւ, փաստորեն՝ նկարիչ:

- Ասեմ, որ քանդակի տանջանքը շատ է, բոլորը, չգիտես խի, քանդակ են ուզում, բայց նկարն ավելի հեշտ է, մի հատ թղթի վրա նկարում՝ տալիս եմ:

- Ինչպե՞ս որոշեցիք նկարել Աննա Հակոբյանին: Ինչպե՞ս նա արժանացավ Ձեր բնորդուհին լինելու պատվին:

- Ես բոլորին ասում եմ՝ ձեռք քաշեք լուսանկարչությունից, անցեք իրականին՝ քանդակ կամ նկարչություն: Ես ունեմ իմ տիպաժները, իմ ձեռագիրը: Ես օգտագործում եմ տեխնիկա…. Մի խոսքով, ես Սեւակի արձանի վրա հիմա էլ ահագին աշխատել եմ, մտել եմ վզի տակով, բան…. Եթե ուզում են Սեւակին ռեալ տեսնել, 1000 դրամով նրա նկարները վաճառում են, թող գնան, առնեն: Ես նման Սեւակ չեմ ընդունում:

- Վերադառնանք Աննա Հակոբյան բնորդուհուն՝ ինչպե՞ս ընտրեցիք:

Հիշեցնենք, որ ամիսներ առաջ Պարույր Սեւակի արձանը, որի հեղինակը Թոքմաջյանն է, մեծ քննադատությունների ու դժգոհությունների առիթ դարձավ, բանը հասավ նրան, որ այն հեռացվեց Զանգակատուն գյուղի դպրոցի բակից:

- Պարոն Թոքմաջյան, էլի քննադատության կիզակետում եք հայտնվել, այս անգամ՝ Աննա Հակոբյանի դիմանկարի համար…. բավականին գեղեցիկ նկար է, ես այն հավանել եմ, բայց հասարակությունը չի հավանել:

- Ես իրեն նախապես նկարել էի, նկարել էի նախապես տպավորությամբ, ինձ մոտ կիսատ էր Աննան, երբ նա եկավ ու նստեց իմ առաջ, նկարը լրիվ ուրիշ կերպ ստացվեց, սակայն նա շատ հավանեց, ասեց՝ նկարում լրիվ ես եմ:

- Մարդիկ գրում են, որ նկարը նման չէ Աննա Հակոբյանին, որ վատ եք նկարել:

- Դե հիմա տեսեք՝ նմանությունը նայած թե ոնց եք նայում երեւույթին, ոնց եք հիշում, ես Աննային նկարել եմ այնպես, ինչպես ես եմ տեսնում: Եթե Մոդիլիանիի նկարները նայեք, ապա դրանք, ոչ՝ նման չեն բնորդներին, նա պարտադիր աչքերին կապույտ տոն էր տալիս, նա այդպես էր տեսնում դիմացինին: Արվեստագետը միայն կարող է ասել՝ ով ում է նման:

- Նկարի համար տիկին Աննան վճարե՞լ է Ձեզ:

- Ոչ, ես նվեր եմ արել՝ նվիրատվություն:

- Եթե, օրինակ, Բելլա Քոչարյանը ցանկանա, կնկարե՞ք նրան:

- Ո՞ւմ, Քոչարյանի կնկա՞ն: Չէ, թեպետ ես եղել եմ իր մոտ, իր օգնականին էլ՝ Վիկային ճանաչում եմ, մի քանի կիսատ գործ արել եմ նրա հետ, բայց՝ չէ, ես պետք է իմաստ տեսնեմ իմ կատարած աշխատանքի մեջ: Ես ուզում եմ իմաստ տեսնել իմ արած գործերի մեջ: Աննան իմ թշնամին չէ, նա ուղղակի գեղեցիկ կին է, գեղեցիկ ժպիտ ունի:

- Իսկ տիկին Բելլան Ձեր թշնամի՞ն է, ինչո՞ւ չեք նկարի նրան:

- Նա չուզեց, ես նրա ճեպանկարն արել էի, ինքը չուզեց: Ես Բելլային նկարելու մեջ իմաստ չեմ տեսնում:

- Ինչպե՞ս է ստացվում, որ մի տեղ տեսնում եք իմաստ, մի ուրիշ տեղ՝ ոչ:

- Աննայի մեջ ծիծաղ եմ տեսնում, ուրախություն, թախիծ: Ես նրա ձեռքը համբուրեցի, ասացի՝ կարո՞ղ է ամուսինդ ինձ կալանավորի, այ մարդ, ասեց՝ չէ, ի՞նչ ես խոսում….

- Բայց նրանք ամուսնալուծվել են, էլ ի՞նչ ամուսին:

- Այ մարդ, ես ի՞նչ գիտեմ, է՞: Ասեցի՝ կարո՞ղ է խանդի ամուսինդ, ասաց՝ ոչ մի դեպքում:

Նյութերը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԵԹԵ ԴՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՍ, ՈՒՐԵՄՆ ՕՐԵՆՔԸ ԴՈՒ ԵՍ



Դեմիրճյան փողոցում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի հետ նախօրեին տեղի ունեցած միջադեպի առնչությամբ ՆԳՆ ոստիկանությունը հաղորդում է ուղարկել Քննչական կոմիտե: Նշենք, որ մարտի 26-ին, ԱԺ-ի դիմաց, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասնակցությամբ միջադեպ էր տեղի ունեցել: Խորհրդարանի դիմաց ակցիա անող՝ անհետ կորած զինծառայողների հարազատներին է մոտեցել Ալեն Սիմոնյանը: Խոսակցությունը վերածվել է վիճաբանության, որի ընթացքում քաղաքացին հայհոյել է Ալեն Սիմոնյանին: ԱԺ նախագահն էլ քաղաքացուն է հայհոյել: Միջադեպից հետո Դեմիրճյան փողոցից 2 անձ, Ալեն Սիմոնյանի հրահանգով՝ «հավաքեք սրան ստեղից», բերման են ենթարկվել ոստիկանության Արաբկիրի բաժին, ավելի ուշ նրանք ազատ են արձակվել: Նրանցից մեկը «Համահայկական ճակատ»-ի նախագահ Արսեն Վարդանյանն է: Ալեն Սիմոնյանն արդեն երկրորդ անգամ է նման սկանդալի կենտրոնում հայտնվում: Տարիներ առաջ էլ քաղաքացու երեսին էր թքել՝ թիկնապահներին հրահանգելով քաղաքացու ձեռքերը նախապես բռնել: Ակնհայտ է, որ ԱԺ նախագահը չի գիտակցում, թե ինչ կարեւոր պաշտոն է զբաղեցնում, եւ պաշտոնատար անձի զսպվածություն դրսեւորելու փոխարեն ցանկացած խոսակցություն վերածում է «տղայական բազառի», ինչի արդյունքում նա չի պատժվում, այլ հակառակ կողմը երբեմն բանտում է հայտնվում:

Ամենեւին չարդարացնելով քաղաքացու ոչ բարեկիրթ կեցվածքն ու հայհոյախառն լեքսիկոնը՝ ասենք, որ ԱԺ նախագահը երբեք չպետք է նման կեցվածքով հաղորդակցվի քաղաքացու հետ: Քանի որ միջադեպի ժամանակ Սիմոնյանն իրավապահներին հրամայել է բռնել մարդուն եւ բաժին տանել, հետաքրքրվեցինք՝ Ազգային ժողովի նախագահն ունի՞ քաղաքացուն ոստիկանության բաժին ուղարկելու լիազորություն: «Հրապարակը» հարց ուղղեց փաստաբան **Երվանդ Վարոսյանին**: Փաստաբանն ասաց. «Երբ մենք խոսում ենք օրենքի մասին եւ այն մասին, թե, առհասարակ, մեր երկրում ով ինչ լիազորություններ ունի, պետք է մի բան հստակեցնել՝ խոսքը ո՞ր պետության մասին է: Իրավակա՞ն պետության մասին է խոսքը, թե՞ ֆեոդալական կարգերով ապրող երկրի: Եթե խոսում ենք Հայաստանի մասին, որն իրավական պետություն պետք է լիներ, ապա իրավական պետությունում ԱԺ նախագահը չունի նման իրավունք: Նրա ֆունկցիան լրիվ այլ է, եւ իրավապահները պետք է միմիայն ենթարկվեն օրենքի տառին: Բայց դե՝ սա Հայաստանն է, այստեղ երբ դու իշխանություն ունես, օրենքը դու ես: Այստեղ զայրանալու շատ բաներ կան, բայց զարմանալու՝ ոչինչ: Հայհոյանքի համար օրենքը ոչինչ չի նախատեսում, եթե այն ուղղված չէ ուղիղ հասարակական կարգ խախտելուն կամ ուղղված չէ, ընդհանուր առմամբ, հասարակության դեմ: Եթե խոսքը նման միջանձնային հարաբերությունների մասին է, ապա դա մարդկանց խնդիրն է, սա է եղելությունը: Ալեն Սիմոնյանը կարող է քաղաքացիական դատարան դիմել՝ հայհոյանքի համար, սակայն քաղաքացին էլ կարող է «Արան պապադ ա» արտահայտության համար դատարան դիմել, չկա որեւէ տարբերություն: Խնդիրն այն է, որ Հայաստանում ընդունված է ցանկացած բարձր ձայն, խոսք, որը տեղի է ունենում փողոցում, որակել որպես խուլիգանություն, բայց մի բան հստակ է՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը պետք է գոնե սովորած լիներ առնվազն փողոցում իրեն ավելի զուսպ դրսեւորել»:

Փոխմարզպետի սիրտը պատգամավորի աթոռ է ուզում

Կոտայքի փոխմարզպետ՝ ՔՊ-ական **Հայկ Մկրտչյանը** խորհրդարանական ընտրությունների թեկնածուների ցուցակում է: ՔՊ ներկուսակցական ընտրությունների առաջին փուլի արդյունքներով, նա 274 թեկնածուի մեջ 199-րդ տեղն է զբաղեցրել:

Հայկ Մկրտչյանը Կոտայքի մարզպետի տեղակալն է 2022-ից: Մինչ այդ զբաղվել է բիզնես գործունեությամբ, աշխատել է պետական եւ համայնքային կառավարման ոլորտում: Նա ուզում է պատգամավոր դառնալ իր երազած ազատ, անկախ եւ ինքնիշխան Հայաստանում: Իր էջում գրել է. «Պետությունը հյուրանոց չէ, որը կարելի է փոխել, ոչ էլ ապաստան՝ ուրիշի հովանու տակ: Հայաստանն ինձ համար սուրբ է, եւ ես այն չեմ փոխի աշխարհի ոչ մի բարեկեցիկ անկյան հետ: Բայց հայրենասիրությունը միայն զգացմունք չէ, այն նաեւ սեփական ողնաշարն ուղիղ պահելու կամքն է: Մենք պետք է դադարենք փրկիչներ փնտրել դրսում: Ո՛չ այլ պետության կազմ մտնելը, ո՛չ էլ որեւէ գերտերության՝ լինի դա Ռուսաստանը, թե մեկ այլ ուժ, «տակը պառկելը» կամ կամակատարը դառնալը չեն կարող լինել մեր ապագայի տեսլականը… Մենք պետք է լինենք մեր երկրի միակ տերը, պատասխանատուն ու կառուցողը: Մեր պատիվն ու պետականությունը սակարկության առարկա չեն»:

Մի քանի հարց ուղղեցինք նրան: Փաշինյանը խոստովանեց, որ 2020-ին գիտակցված զոհողության է գնացել, որի արդյունքում «ձեռք ենք բերել պետություն եւ անկախություն»: Ի՞նչ կարծիք ունեք այս մասին: «Վարչապետի խոսքը չեմ մեկնաբանում, ոչ էլ դրա իրավունքն ունեմ՝ մեկնաբանելու: Կարծում եմ՝ ինքը շատ պարզ, հստակ ասեց»: Ասաց, որ 5 հազար տղա զոհեցինք, որ անկախություն ունենանք, մի՞թե Հայաստանն անկախ չէր: «Հայաստանն ազատ, անկախ եղել է, բայց այդքան էլ ազատ, անկախ չի եղել: Մենք հիմա ուզում ենք, որ անկախ լինի, ոչ մեկից կախված չլինի: Սենց հեռախոսով սխալ է հարցազրույց վերցնելը, կներեք, ժամանակ չունեմ»: Մի հարց էլ՝ Փաշինյանն ասում է, որ խաղաղություն է բերել, մյուս կողմից՝ սպառնում է պատերազմով. եթե ՔՊ-ն չընտրվի, պատերազմ կլինի: «Ես ՔՊ անդամ եմ, բայց դա իրավունք չի տալիս՝ իր խոսքը մեկնաբանեմ»: Դուք իսկապե՞ս պատգամավոր եք ուզում դառնա, թե՞ ուղղակի ՔՊ-ի համար ձայն եք հավաքելու: «Դա արդեն չեմ մեկնաբանի»: Ոչինչ չեք ուզում մեկնաբանել, բայց ուզում եք պատգամավոր դառնալ, վերջերս Ձեր անունը շրջանառվում էր Ձեր եկամուտների հայտարարագրի առումով, որտեղ կային անշարժ գույք, տրանսպորտային միջոց, խոշոր փոխառություններ, բանկային եւ կանխիկ միջոցներ, գրվեց հնարավոր շահերի բախման եւ կոռուպցիոն ռիսկերի մասին: «Լավ, էլի, լավ, էլի, խնդրում եմ, ում պետք էր, ինչ պետք էր, ճշտել են, տեսել են ու անունը կապել են: Մեկը մի անհեթեթություն գրել է, չեմ պարզաբանելու, ցանկություն էլ չունեմ»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՅԵՌՈՒՑ

ԻՆՉՊԵՍ ԵՆ «ՏՆԱՎՈՐՈՒՄ» ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ՝ ՁՐԿԵԼՈՎ ՆՐԱՆՑ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ

«Խաղաղվեք, բոխչաները քանդեք ու տնավորվեք, խաղաղություն է»,- արցախցիներին դիմում է Նիկոլ Փաշինյանը, իսկ հայաստանցիներիս կոչ է անում այլեւս չխոսել վերադարձի օրակարգի մասին, քանի որ դրանով «չենք թողնում, որ էդ մարդիկ խաղաղվեն ու տնավորվեն», հրաժարվեն պանդուխտի հոգեբանությունից ու ճամպրուկային տրամադրություններից:

Եվ որպեսզի մարդիկ տնավորվեն, Նիկոլ Փաշինյանը «լավարկում» է բնակարանային աջակցության ծրագիրը: Փոփոխությունների էությունը շարադրեմ կարճ. նախկինում Աշտարակում, Արտաշատում, Մասիսում, Փարաքարում, Աբովյանում, Նաիրիում, Նոր Հաճնում, Գառնիում, Ջրվեժում եւ հարակից բնակավայրերում բնակարան ձեռք բերող բռնի տեղահանվածները ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար ստանում էին 3 մլն, այժմ կստանան 4 մլն: Կոպիտ ասած՝ բոլոր մարզային բնակավայրերում աջակցության չափը կկազմի 4 մլն դրամ, բացի 5 մլն սահմանաչափով բնակավայրերից: Իսկ Երեւանում 1 շնչի համար 3 մլն դրամ են տալիս: Նախկին կարգավորմամբ, ընտանիքի անդամ էին համարվում մինչեւ 2025 թ. դեկտեմբերի 31-ը ծնված երեխաները, այսօր արդեն՝ մինչեւ 2026 թ. ծնվածները: Այժմ 2 մլն դրամ աջակցությունը կտրվի ոչ միայն հիփոթեքով, այլեւ մյուս վարկատեսակներով բնակարան ձեռք բերողներին: Մեղմացրել են փաստաթղթերի պահանջը: Հիմա հավաստագիր ստանալու համար կարելի է ներկայացնել ոչ միայն հաշիվ-ապրանքագրեր, այլեւ վճարային այլ փաստաթղթեր, օրինակ, ՀԴՄ կտրոն: Եվ վերջին լավությունն արցախցիներին այն է, որ հեշտացվել է շահառուի կարգավիճակ ստանալը: Դրա համար հիմք կարող է դառնալ ոչ միայն Ղարաբաղի անհատական հաշվառման տվյալների բազան, այլեւ ուրիշ տվյալների բազաներ: Նկատի առնենք, որ բազմաթիվ «լավարկումներից» հետո էլ տնավորման ծրագրից օգտվողները շատ չեն. ըստ սոցապնախարարության տվյալների, մինչեւ մարտի 26-ը հավաստագիր է ստացել 5 հազար 232 ընտանիք, որից 2 հազար 336-ն իրացվել է:

Իսկ 24-ի վերջին Հայաստանում բնակություն էր հաստատել 103 հազար 674 արցախահայ, որոնցից ընդամենը 0,8%-ն է դիմել բնակապահովման ծրագրի համար:

Այս տարի այդ թիվը շատ չի ավելացել: «Վերադարձի իրավունքը նույնականացնել տուն տալու հետ՝ կամ անգրագիտություն է, կամ հերթական մանիպուլյացիան: Վերադարձի իրավունքը բացարձակ իրավունք է»,- այսպես է կառավարության ջանքերը «գնահատում» ՀՀ առաջին ՄԻՊ **Լարիսա Ալավերդյանը**: Մենք արժանահավատ աղբյուրներից գիտենք, որ, ի տարբերություն ադրբեջանցիների, որոնք 88-90 թթ. ինքնուրույն են լքել Հայաստանը, փոխանակել կամ վաճառել իրենց տները, արցախցիներին տեղահանել են ագրեսիայի, սպանությունների միջոցով, զենքի օգտագործմամբ, եւ, ըստ Լարիսա Ալավերդյանի, սա իրենց՝ այստեղ բնակարան ձեռք բերելու հետ կապ չունի: «Մենք 20 թվականից ունենք բռնի տեղահանված մարդիկ, որոնք պետք է դիտարկվեն իբրեւ ցեղասպանությունից փրկված: Անձը կարող է ունենալ սեփականություն, ձեռք բերել անշարժ գույք, դա կապ չունի վերադարձի իրավունքի հետ, որը բացարձակ իրավունք է, եւ այս հարցը պետք է միշտ մնա քաղաքական օրակարգում, ոչ թե քաղաքական անօգնականության, անմեղսունակության մակարդակով փորձել խլել ու մերժել այդ իրավունքը: Օրվա վարչակազմը ոչ միայն չի բարձրացնում վերադարձի իրավունքի հարցը, այլեւ ասում է, որ դա պետք է մոռացվի: Պետք է հաշվի առնել, որ բոլոր արցախցիները մինչեւ 2023 թվականը եղել են ՀՀ քաղաքացիներ, եւ գործող վարչակազմը պարտավոր էր պաշտպանել ՀՀ քաղաքացիներին, ինչը նա չի արել, իսկ սա նշանակում է, որ իրենք չեն կատարել իրենց պարտականությունները՝ որպես ղեկավարներ, որոնք հանդես են եկել այս գործընթացի մեջ որպես բանակցային կողմ, ու մարդկանց վիճակի համար ողջ պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է այս վարչակազմի վրա»,- ասում է Լարիսա Ալավերդյանը:

Ինչ վերաբերում է բնակարանային ապահովման ծրագրերին՝ սերտիֆիկատ տալու միջոցով, ապա, ըստ ՀՀ առաջին ՄԻՊ-ի, այդ մոդելը բոլոր պետությունների կողմից մերժված է, քանի որ այն աղավաղում է բնակարանային շուկան: «Եթե դու պետական մակարդակով շրջանառության մեջ ես նետում ինչ-ինչ գումարներ, դա աղավաղում է անշարժ գույքի բնակարանային շուկան: Երկրորդը. ի վերջո, վաճառվում են այդ բնակարանները, դրանք նվեր չեն, ինչ-որ ժամանակ հետո նրանք պետք է վերադարձնեն գումարը, որը տրվում է»:

Արցախի նախկին պատգամավոր **Դավիթ Գալստյանը** վստահեցնում է՝ 3 մլն դրամը դարձնելով 4 մլն, կառավարությունն ավտոմատ կերպով 1 մլն դրամով թանկացնում է գույքը, եւ արդյունքում ոչինչ չի փոխվում: «Ես մարդ գիտեմ, որը 90 հազար դոլարով ուզել է տուն գնել, արդեն վաճառողի հետ պայմանավորված՝ գնացել է, բայց 4 մլն դարձնելուց հետո այդ մարդը 5 հազարով ավելացրել է գինը»,- ասում է նա եւ հիշեցնում. «Վերադարձի իրավունքը նաեւ արցախցիների՝ հայրենիքում թողած սեփականությունն է, որի մասին ոչ ոք չի ուզում խոսել»:

Կառավարության վերջին «լավությունը», դրա նոր կետերը արցախցիների համար անհասկանալի են: Նրանք սոցցանցերում հարցեր են հնչեցնում: Ամենամտահոգիչը թերեւս այն է, որ Երեւանում հանգրվանած մեր հայրենակիցների համար ոչինչ չի փոխվել: Ինչո՞վ ենք մենք տարբերվում մյուսներից, որ 3 միլիոնը գոնե 4 չեն ուզում դարձնել՝ հարցնում են նրանք: «Խի Երեւանում բնակվողները բռնի տեղահանված չեն: Դա ի՞նչ ջոկողություն ա: 2 ուսանող ունեմ, համ մարզում տուն վարձեմ, համ քաղաքո՞ւմ: Ո՞նց գնան-գան»,- հարցնում է Երեւանում տուն վարձակալած արցախցի կինը: «Շատ-շատ ուժեղ նորություն էր, 3 տարի նստած՝ դրան էինք սպասում, ուրիշ բան չասեմ»,- հեգնում է մյուսը: Ոչ մի լավ լուր կառավարությունը չունի այն անձանց համար, որոնք դեռ Արցախում ապրելու ժամանակ վարկեր էին վերցրել՝ չէին կարողացել վճարել եւ ընկել էին սեւ ցուցակ: Նորություն չունի նրանց համար, որոնց գործերը ԴԱՀԿ-ում են: Նրանք չեն կարող բանկերի հետ գործարքներ անել, իսկ այդպիսիք քիչ չեն: Արցախից բռնի տեղահանվածներն այսօրվա Հայաստանում ամենաունեզրկված խավն են:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ԽԱԲՈՂՆԵՐ ՄԻՇՏ ԵՆ ԵՂԵԼ ԵՎ ԷԼԻ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ, ՄԵՆՔ ՉՊԵՏՔ Է ԽԱԲՎԵՆՔ

«Հրապարակի» զրուցակիցը ՍԻՄ կուսակցության նախկին նախագահ **Հրանտ Խաչատրյանն** է:

- Տեւական ժամանակ է՝ իշխանություններն ու ընդդիմությունը նախընտրական քարոզարշավ են սկսել, տարբեր խոստումներ են տալիս, հայտարարություններ անում, Փաշինյանը սպառնում է պատերազմով, քաղաքացիների հետ վիճում է, մատ թափ տալիս նրանց վրա.... 2018-ին սեր ու համերաշխություն խոստացող Փաշինյանն այժմ բացառապես սպառնալիք ու ատելություն է տարածում:

- Քաղաքական ֆալստարտ է սա՝ ՔՊ-ի ու ընդդիմության կողմից: Քաղաքական ուժերն այս պահին չունեն ոչինչ անելու, այսինքն՝ ժամանակ են անցկացնում, մինչեւ տեսնեն, թե ինչի են հասնելու: Ժամանակ են անցկացնում, որպեսզի տեսնեն, թե միջազգային իրադրությունը որ կողմի վրա է շուռ գալու: Հետաքրքիրն այն է, որ մեծ ոգեւորությամբ բոլորը ներգրավվեցին նախընտրական պրոցեսների մեջ, պարզ է, թե ինչու, որովհետեւ քարոզարշավը ենթադրում է խոսել, խոսել, խոսել ու խոսելուց բացի ուրիշ ոչ մի բան չանել: Խոսելը միշտ է եղել ամենահեշտ բանը: Բայց թե ինչ են խոսում, դա էական չէ.... Ты дурак - Сам дурак վիճակն է: Անկեղծ ասած՝ ես չեմ կարողանում նախընտրական այս պրոցեսներին լուրջ վերաբերվել եւ այդ մասին լուրջ խոսել: Ես առաջ ընկնեմ նրանցից եւ ասեմ, որ պետք է անելիքներին անցնել: Քարոզարշավի մեջ մի դրական բան եմ տեսնում՝ ինչ-որ նոր խմբեր են ստեղծվում եւ փորձեր են անում ինքնուրույն հանդես գալու: Ինքնուրույն հանդես գալը դարձել է նորաձեւ, իսկ դա լավ է:

- Օրինակ՝ ո՞ր ուժերն են փորձում ինքնուրույն երեւալ:

- Տարբեր կուսակցություններ են ստեղծվում, ու որքան էլ աներեւույթ կապերով նրանք կապված են միմյանց հետ, սնվում են միեւնույն ֆինանսական աղբյուրներից, ունեն նույն կախվածությունները, այնուամենայնիվ, հավանականություն կա, որ այդ ամենի արդյունքում կարող է մի նոր բան ի հայտ գալ: Ես ապագա ընտրողին մի խորհուրդ կարող եմ տալ. երբ լսում եք որեւէ ուժի ներկայացուցչի, որը վստահ է խոսում ինչ-որ մի բանի մասին եւ պնդում է, որ հենց այդպես է լինելու մի քանի ամիս անց, ապա շատ հստակ ասում եմ՝ նման ուժի հավատալ պետք չէ, որովհետեւ այսօր աշխարհում ամեն բան փոխվում է շատ արագ:

- Օրինակ՝ Փաշինյանը վստահ է, որ եթե ինքը բացարձակ մեծամասնություն չկազմի, սեպտեմբերին պատերազմ կսկսվի:

- Փաշինյանն արդեն իսկ ընկավ իմ նշած բանաձեւի տակ, նրան պետք չէ հավատալ, պատերազմի հավանականությունն արդեն քանի տարի է՝ մեզանում զրո չէ, եւ զրո չի էլ դառնա, մինչեւ աշխարհաքաղաքական վիճակը չգնա դեպի կայունացում, իսկ եթե ավելի սկզբունքային ձեւակերպում անենք, ապա աշխարհի վերաձեւման, վերաբաժանման այս փուլը մեզ հետ երկրորդ անգամ է առճակատվում: 90-ականներից սկսած, այդ իրավիճակն է: Մինչեւ աշխարհի մակարդակով իրավիճակ չփոխվի, պատերազմի վտանգը չի չեզոքանա: Այնուամենայնիվ, թե որքան է դրա հավանականությունն այս պարագայում, բարդ է ասելը: Այն մի շարք այլ հանգամանքներից էլ է կախված: Մեր միակ անելիքը հիմա ազգային ռեսուրսների կենտրոնացումը պետք է լիներ, պետք է ազգային նպատակների ուղղությամբ փորձեինք շարժվել, ուղղություն եմ ասում, որովհետեւ մենք ազգային շահերից արդեն շատ ենք հեռացել:

- Նշում եք, որ ոչ մի գործնական քայլ չի արվում, բայց Փաշինյանը, որպես ընտրակաշառք, թոշակներն է բարձրացնում, առողջապահական որոշ ծառայություններ դարձնում է անվճար: Գուցե որոշ շրջանակներ տրվեն այդ գայթակղությանը եւ 8 տարի վնասից բացի ոչ մի լավ բան չարած ՔՊ-ին քվե տան:

- Մարդկային գայթակղությունն ու չափավորությունը եւ, առհասարակ, մարդկային ցանկացած դրսեւորում միշտ էլ կա, իսկ հատկապես մեր իրականության մեջ դրանք բազմազան են, պարզապես վատն այն է, որ ընտրությունները բնական հունով չեն ընթանում, դրանք հիմնականում ինչ-որ կեղծ արժեքների վրա են լինում հիմնված: Բոլորն էլ խոսում են, բայց ես նոր բան նրանց խոսքում չեմ տեսնում: Թե ով ում կխաբի ու ինչպես կխաբվի, երեսուն արծաթով ով ինչ կանի, այդ առումով ես կարող եմ մի խորհուրդ տալ մարդկանց՝ խաբողներ միշտ են եղել եւ էլի լինելու են: Համախմբվելու բարձրագույն աստիճանը պետություն ունենալն է, եթե մենք չունենք այնպիսի պետություն, որը կարողանում է խաբողների ձեռքը բռնել կամ առնվազն զսպել նրանց ախորժակը, որպեսզի այնպես լինի, որ մեզ էլ չխաբեն, ապա անիմաստ է մեծ հույսեր կապելը: Մենք պետք է կարողանանք այնպես ապրել, որ մեզ չկարողանան խաբել: Թող իրենք հա խաբեն, բայց մենք, որպես հասարակություն, չպետք է խաբվենք: Դիփ խաբում ու խաբում են՝ ինչպես հայտնի ֆիլմում է ասվում:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵՐ ԹԻՄՆ ՈՒՆԻ ՄԻ ՇԱՏ ՄԵԾ ՈՒ ԱՆԱՌԱՐԿԵԼԻ ՀԱՂԹԱԹՈՒՂԹ

«Հրապարակի» զրուցակիցը «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության անդամ, անվտանգային հարցերով մասնագետ **Նարեկ Պարոնյանն** է:

- Անցյալ ամիս «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնությունը եւ «Հայաքվե» ազգային քաղաքացիական միավորումը ստորագրեցին համագործակցության հուշագիր՝ առաջիկա համապետական ընտրություններում մեկ ճակատով հանդես գալու նպատակով: Ըստ Ձեզ, սա քաղաքական երկարատեւ համագործակցության մեկնամրկ է, թե՞ նախընտրական կարճաժամկետ դաշինքային քայլ:

- «Միասնության թեւերը»՝ որպես պատասխանատու եւ ռազմավարական նպատակներ ունեցող քաղաքական ուժ, նպատակաուղղված է համագործակցության այն բոլոր ուժերի հետ, ովքեր հանդես են գալիս Հայաստանի, հայ ժողովրդի շահի սպասարկման տեսանկյունից, բոլոր նրանց հետ, ովքեր պայքարում են հանուն մեր ազգային արժանապատվության, հանուն անկախ, անվտանգ, դեպի ապագան քայլող Հայաստանի: «Հայաքվեի» մեր հարգարժան գործընկերները հենց նմանատիպ մարդիկ են, մարդիկ, ովքեր իրենց գործունեությամբ են ապացուցել իրենց հայրենասիրությունը եւ նվիրվածությունը Հայաստանին:

- Այլ ուժերի հետ համագործակցության ազդակներ կա՞ն: Օրինակ, ձեր քաղաքական ուժի վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը, նման հնարավորությունները չբացառելով, խոսել է նաեւ, որ շփումներ կան հայկական սփյուռքի հետ: Կարո՞ղ եք կոնկրետ շրջանակներ մատնանշել:

- Թաթոյանի կողմից տարվում են աշխատանքներ, տեղի են ունենում հանդիպումներ, քննարկումներ, արվում է ամեն բան, որպեսզի ընդդիմադիր դաշտը կուռ, անզիջող եւ հետեւողական պայքար մղի գործող կործանարար վարչակազմի դեմ: Ոչ մի քաղաքական հանդիպում եւ քննարկում ինքնանպատակ չէ. մեր «Միասնության թեւերի» նպատակն է՝ իշխանազրկել օրվա պատուհաս իշխանություններին եւ մեր հայրենիքի համար ստեղծել նոր վերածնման եւ նոր ձեռքբերումների հնարավորություն: Անկասկած, սա շատ բարդ գործընթաց է՝ մանավանդ նման բազմազան եւ խայտաբղետ քաղաքական դաշտում, բայց մենք համառ ենք ու հետեւողական եւ կանենք ամեն բան՝ մեր նպատակներին հասնելու համար:

- Հունիսի 7-ին նախանշված խորհրդարանական ընտրություններին մասնակցող հիմնական ուժերն ու դաշինքները հայտնի են, ֆավորիտների ցանկում նշվում են Ռոբերտ Քոչարյանի, Սամվել Կարապետյանի, Գագիկ Ծառուկյանի անունները, իհարկե, ՔՊ-ն նույնպես, անկախ մեր կամքից ու քննադատությունից: Ըստ Ձեզ, ինչպիսի՞ տեսք կունենան ապագա խորհրդարանը եւ ապագա կառավարությունը, եթե իրատեսական լինենք:

- Հարցն իրատեսականության կամ ռոմանտիզմի մեջ չէ: Այսօր արդեն պարզ է, որ ընդդիմադիր դաշտում ձեւավորվել է մի քանի բեւեռ. «Ուժեղ Հայաստանը» եւ «Միասնության թեւերն» այդ առումով, կարելի է ասել, սպասված նորություն են մեր հայրենակիցների համար: Անկասկած է, որ մեր հայրենակիցների ճնշող մեծամասնությունը պահանջարկ ուներ նոր ուժերի եւ նոր դերակատարների, եւ այս առումով համոզված եմ՝ սա կխթանի եւ մարդկանց մասնակցությունն ընտրություններին, եւ կարդարացնի շատերի սպասումները: Գագիկ Ծառուկյանի ուժը եւս հանդես է գալիս հետաքրքիր տնտեսական եւ սոցիալական ծրագրերով: Կարծում եմ՝ այն կկարողանա բավարարել մեր հայրենակիցների որոշ հատվածի սպասումները: Ամեն դեպքում, մենք միշտ շեշտել ենք եւ այժմ էլ շեշտում ենք, որ առաջարկում ենք ընդդիմությանը համագործակցություն մի քանի առանցքային հարցերի շուրջ՝ որեւէ պարագայում չենք միանում ՔՊ-ին, միակարծիք եւ հաստատակամ լինենք քաղբանտարկյալների եւ քաղաքական հետապնդումների հարցում, միանշանակորեն սատար ենք կանգնում ՀԱԵ-ին եւ Վեհափառ հայրապետին եւ փորձում ենք նախընտրական փուլում միմյանց չթիրախավորել: Սա մեր, այսպես ասած, առաջարկն է՝ բաց եւ հասկանալի: Բայց պետք է նշեմ նաեւ, որ, ցավոք, ընդդիմադիր դաշտում կան քինախնդիր, հիշաչար եւ բարդույթավորված դերակատարներ, ովքեր փորձում են խժդժություններ մցնել ընտրական պրոցեսում, խառնել իրավիճակը… ցավոք, այդ քայլերը համ բարդացնում են ընդդիմադիրներիս գործը, համ որոշակի առումով ուժեղացնում են ՔՊ-ին: Ամեն դեպքում, մենք պատրաստ ենք քաղաքակիրթ եւ կառուցողական աշխատանքի բոլոր-բոլորի հետ, ում նպատակն է կասեցնել այս համազգային աղետը:

- Որքան էլ խոսենք քաղաքական գործընթացների, ընտրազանգվածների եւ այլ համատեքստերի մասին, Հայաստանում շարունակում է գործել մարդկուսակցություն ավանդական գործոնը: Եթե Փաշինյանը հայտարարում է, թե կառավարությունն ինքն է, ապա մյուս գործիչները գոնե համեստորեն իրենց համախոհներին են թողնում նման խոսույթը: Ձեր քաղաքական ուժի հաղթաթուղթը հենց Արման Թաթոյա՞նն է:

- Միանշանակ, Հայաստանում կա անհատի հետեւից գնալու եւ անհատի հետ իշխանություն-հասարակություն հանրային պայմանագիր կնքելու տենդենց: Դա շատ բնական է եւ ունի բազմաթիվ օբյեկտիվ պատճառներ: Այս առումով կարելի է ասել, որ, այո, Թաթոյանը լավ իմաստով հաղթաթուղթ է. իր կենսագրության, կրթության, աշխատանքային փորձի, բարեկրթության եւ բարձր մարդկային հատկանիշների շնորհիվ նա իրոք սիրված եւ ընդունված գործիչ է: Բացի Թաթոյանի հանգամանքից, մեր թիմը նաեւ ունի շատ մեծ ու անառարկելի հաղթաթուղթ եւս. մենք՝ բոլորս, բարձր որակի մասնագետներ ենք, յուրաքանչյուրս՝ մեր ոլորտում, եւ ոչ ոք ոչ մի պարագայում չի կարող ժխտել այդ փաստը:

- ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն օրերս հայտարարել էր, որ պառակտված ընդդիմությանը միավորելու միակ կարող ուժը գործարար Սամվել Կարապետյանն է, ինչին ի պատասխան՝ ձեր առաջնորդը նշել էր, որ դա Տեր-Պետրոսյանի կարծիքն է, եւ որ դուք ունեք ձեր սեփական օրակարգն ու առաջ եք շարժվում դրանով: Ո՞րն է ձեր գլխավոր օրակարգը, բացի ընտրվելուց՝ ի՞նչ հիմնական խնդիր-նպատակադրում ունեք, որով մոտենում եք ընտրողներին:

- Լեւոն Տեր-Պետրոսյանի հնչեցրած կարծիքին, կարծում եմ, Թաթոյանի պատասխանը շատ ընդգրկուն էր, եւ այս առումով ավելացնելու բան, իմ կարծիքով, չկա: Ինչ վերաբերում է գլխավոր օրակարգին՝ մեր գլխավոր օրակարգը ոչ թե զուտ ընտրվելն է, դա իշխանության համար պայքար է՝ հանուն իշխանության, եւ նման հարցադրումների հասցեատերը հաստատ մենք չենք, մեր գլխավոր օրակարգն անվտանգ, ամուր, սեփական ուժերով իր խնդիրները լուծող, արդար եւ հարատեւ Հայաստանն է:

Արա ԱԼՈՅԱՆ

ՀԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ Է՝ ՆՈՒՅՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՎ ԵՎ ԱՆԹՈԹՈԽ

Փաշինյանի կառավարությունը «պարապ մնալ» չի սիրում. դպրոցները փակելուն զուգահեռ, հիմա էլ e-draft համակարգում շրջանառվում է մի նախագիծ, ըստ որի՝ Գեղարքունիքի մարզի 30 գյուղական ամբուլատորիա կօպտիմալացվի, ինչի մասին վաղուց էր խոսվում:

Այսպես՝ «ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Գեղարքունիքի մարզի առողջապահական համակարգերում փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությամբ: Գեղարքունիքի մարզի առողջության առաջնային պահպանման կազմակերպությունների կողմից իրականացվող ծառայությունների արդյունավետության եւ որակի բարձրացման նպատակով, ավելի հմուտ եւ օպտիմալ կառավարման համար առաջարկվում է միաձուլման եղանակով առողջության առաջնային պահպանման կենտրոնները վերակազմակերպել «փնջերի»: Միաձուլման արդյունքում ենթադրվում է վարչական աշխատակազմի կրճատում, որը կհանգեցնի «փնջի» վարչական անձնակազմի աշխատավարձի բարձրացման, արդյունքում որակապես նոր մակարդակի վրա կդրվի մարզում առողջության առաջնային պահպանման օղակում կառավարումը, որը միտված է ավելի մրցունակ կառավարման համակարգ ունենալուն: Առաջարկվող վերակազմակերպումը կնպաստի բժիշկ-մասնագետների (ներկայում զբաղեցնում է երկու եւ ավելի դրույք՝ ներառյալ տնօրենի մեկ դրույքը)՝ բացառապես բժշկական գործունեությամբ զբաղվելուն եւ ազգաբնակչությանն առավել որակյալ, հասանելի ու մատչելի բժշկական օգնություն եւ սպասարկում տրամադրելուն, առողջապահական ցուցանիշների եւ բնակչության գոհունակության բարելավմանը: Ինչպես նաեւ՝ կառաջանան տնտեսված, միավորված եւ խնայված ֆինանսական միջոցներ, որոնք էլ կուղղվի՝ կազմակերպության արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ սարքավորումներով վերազինմանը՝ որոշակի ծառայություններ ավելի հասանելի դարձնելով բնակչությանը (այդ ծառայությունները կմատուցվեն տեղում): Միաձուլման ձեւով վերակազմակերպել Գեղարքունիքի մարզի «Սարուխանի բժշկական ամբուլատորիա» եւ «Գանձակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ները՝ ստեղծելով «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի N 1 առողջության կենտրոն» ՊՈԱԿ: «Լճափի ԱԱՊԿ»-ն, եւ «Նորատուսի բժշկական ամբուլատորիան» եւ «Կարմիրգյուղի բժշկական ամբուլատորիան» կմիաձուլվեն՝ դառնալով «Գեղարքունիքի մարզի Գավառի N 2 առողջության կենտրոն» ՊՈԱԿ, եւ այսպես շարունակ:

«Առողջության իրավունք» ՀԿ նախագահ **Անուշ Պողոսյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ շրջանառվող նախագծի արդյունքում 30 գյուղական ամբուլատորիայից կմնա 9-ը: ««Ապագան» կրկին հետապնդում է Գեղարքունիքի մարզի գյուղական ամբուլատորիաներին: ՏԿԵ նախարարության կողմից 2 նախագիծ կար ներկայացված, մեկը վերաբերում էր Գեղարքունիքի, մյուսը՝ Արարատի մարզին: 2024 թվականին, երբ քննարկեցինք ԱԺ-ում, բացերն ասացինք, լայն քննարկման արդյունքում իրենք հետ կանգնեցին, սակայն նախագիծը նորից բերել են, եւ շատ տարօրինակ է, որ անգամ չեն փոխել: Դեղերի գնման հետ կապված մասը, որովհետեւ այսօր ամբուլատորիաները, կարելի է ասել, դեղեր չեն գնում, ամբողջությամբ օֆերտայի հիմք է դրված, եւ դեղորայքը քաղաքացիները գնում են դեղատներից: 2024 թվականին չիրականացված ծրագիրն այսօր վերադարձել է՝ նույն տրամաբանությամբ, նույն վտանգներով: Սա առողջապահական բարեփոխում չէ, սա համակարգի ձախողման օրինականացում է, որի հետեւանքը կրելու է գյուղացին»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՆՉ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ ԵՆ ԲՈՒԾՎՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՆՄԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ ՈՒՂԵՂՆԵՐԸ

Նիկոլ Փաշինյանը, լինելով հզոր խելքի ու մտքի տեր անձնավորություն՝ տիեզերական մասշտաբի ինտելեկտուալ, իր շուրջն է հավաքել համարյա իր նման ինտելեկտուալների, որոնք իրենց գիտելիքով, տեղեկացվածությամբ եւ վերլուծական կարողություններով գրեթե չեն զիջում միմյանց: Կարելի է մի երկու համեմատություն անել, եւ պարզ կդառնա, որ սրանք իրար ոչնչով չեն զիջում, շատ հարցերում անգամ գերազանցում են, իսկ որ ՔՊ-ում լուրջ մրցակցություն է, եւ բոլորն ուզում են ցույց տալ իրենց մտավոր ընդունակությունները, գիտականորեն ապացուցված փաստ է:

Օրերս իր գիտելիքներով հերթական անգամ փայլեց Նիկոլ Փաշինյանը. խորհրդարանում կառավարության հետ հարցուպատասխանի շրջանակներում նա բառացիորեն հայտարարեց. «Ուկրաինայի անվտանգության երաշխավորը գիտե՞ք ով է՝ Ռուսաստանն է: Կիպրոսի անվտանգության երաշխավորության հարցում գիտե՞ք ով է դերակատարություն ունեցել՝ Թուրքիան»: Փաշինյանը չշարունակեց զուգահեռները, բայց պարզից էլ պարզ է, որ եթե շարունակեր, պետք է ասեր՝ Հայաստանի անվտանգության երաշխավորը գիտեք՞ ով կարող է լինել՝ Ադրբեջանը: Իսկ ինչպե՞ս է Ռուսաստանը երաշխավորում Ուկրաինայի անվտանգությունը. գրավել է այդ երկրի տարածքի 20-25 տոկոսը, ուզում է գրավել մնացած մասը, ոչնչացնել Ուկրաինան՝ այն միացնելով Ռուսաստանին: Իսկ Թուրքիան Կիպրոսի անվտանգությունն ինչպե՞ս է երաշխավորում. կղզու 40 տոկոսը գրավելով, այդ տարածքում էթնիկ զտում իրականացնելով եւ այնտեղ արդեն 50 տարուց ավելի ռազմաբազաներ պահելով: Հիմա Ադրբեջանը ո՞նց է երաշխավորելու Հայաստանի անվտանգությունը, Հայաստանի քանի՞ տոկոսն է այդ երաշխավորության դիմաց Փաշինյանը պատրաստ հանձնել Ադրբեջանին՝ 25, 40, թե՞ 100 տոկոսը:

Քանի որ գրել ենք, որ ՔՊ-ում ինտելեկտուալ մրցակցություն է, Փաշինյանից փորձեց հետ չմնալ նրա խորհրդարանական խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, որը եթեր մտավ ու հայտարարեց, որ հունիսի 7-ին ընդդիմությունը պատրաստվում է զավթել իշխանությունը եւ պատերազմ հրահրել: Նախ, ի տարբերություն ՔՊ-ի, որը 2018 թվականին իսկապես հակասահմանադրական եղանակով հեղաշրջում է կազմակերպել եւ զավթել իշխանությունը, որեւէ ընդդիմադիր կուսակցություն կամ գործիչ չի խոսում իշխանության զավթման մասին, հայտարարում են ընտրություններում հաղթելու եւ իշխանություն ձեւավորելու մասին: ՔՊ-ի համար իշխանությունից իրենց հեռացնելու ցանկացած փորձ, այդ թվում՝ եւ սահմանադրական, իշխանազավթում է:

Կոնջորյանի խելքն ու միտքն առանձնակի փայլով շողացին, երբ փորձեց հիմնավորել, թե ինչու է ընդդիմության հաղթանակը դառնալու պատերազմի պատճառ: Ըստ նրա, ընդդիմությունը դա արդեն մի անգամ արել է Ղարաբաղում՝ 2023 թվականի սեպտեմբերի 9-ին, երբ Ղարաբաղում ընդդիմությունը զավթեց իշխանությունը, երբ Սամվել Շահրամանյանն ընտրվեց նախագահ: Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը շնորհավորեցին նրան եւ հույս հայտնեցին, որ նույն բանը տեղի կունենա Հայաստանում: Արդեն սեպտեմբերի 19-ին Ղարաբաղում սկսվեցին ռազմական գործողությունները, իսկ սեպտեմբերի 26-ին՝ իր ընտրվելուց ընդամենը 17 օր անց, Սամվել Շահրամանյանը ստորագրեց Ղարաբաղի լուծարման հրամանագիրը: Ահա թե ինչ են ուզում անել ընդդիմադիրները Հայաստանում. զավթել իշխանությունը, սանձազերծել պատերազմ, լուծարել Հայաստանը: «Սա իրենց աղետաբեր եւ եղկելի պլանն է, մենք թույլ չենք տալու այս պլանի իրագործումը»:

Ինչպես տեսնում եք՝ գործ ունենք հիրավի խոշոր ինտելեկտուալի հետ, որն իր խելքով մի քիչ է զիջում Նիկոլ Փաշինյանին: Ըստ Կոնջորյանի, եթե 2023 թվականի սեպտեմբերի 9-ին Սամվել Շահրամանյանը չընտրվեր նախագահ, այլ նախագահ մնար Արայիկ Հարությունյանը, Ադրբեջանը չէր հարձակվի Արցախի վրա, Ադրբեջանի կողմից Արցախի 9-ամյա շրջափակումը մարդասիրական միջոցառում էր, ոչ թե թշնամանքի եւ պատերազմի դրսեւորում: Մենք Կոնջորյանին կարող էինք հուշել, որ երկրի տոտալ շրջափակումը նույնպես պատերազմի դրսեւորում է, բայց քանի որ տիեզերական մասշտաբի ինտելեկտուալ է, մեզ նման լկտիություն թույլ չենք տա:

Կոնջորյանի մյուս մեղադրանքն այն է, որ Շահրամանյանն իր հրամանագրով լուծարել է Արցախի Հանրապետությունը, որի անունը Կոնջորյանը վախից չի էլ կարող տալ. ինչպես հայտնի է ՔՊ-ական ինտելեկտուալները նաեւ չափազանց վախկոտ են, այդ հարցում եւս նա մի փոքր է զիջում իր ղեկավարին: Սրանց ասածից ստացվում է, որ եթե Սամվել Շահրամանյանը 2023 թվականի սեպտեմբերի 26-ին Արցախի Հանրապետությունը լուծարելու մասին հրամանագիր չստորագրեր, ԱՀ-ն մինչ օրս շարունակելու էր գոյություն ունենալ, հնարավոր է նույնիսկ, որ Նիկոլ Փաշինյանը ճանաչած լիներ Արցախի Հանրապետությունը: Այն նույն Նիկոլ Փաշինյանը, որը ոչ միայն վախենում է «Արցախ» բառն արտասանելուց, այլեւ մարդուն հրապարակային ազատում է աշխատանքից, միայն այն պատճառով, որ նա «Արցախ» անունով գիրք է ձեռքը բռնել, իսկ Ալիեւն իմացել է դրա մասին:

Հետաքրքիր է իմանալ, թե ինչպես են Նիկոլ Փաշինյանը եւ Հայկ Կոնջորյանը թույլ չտալու, որ հասարակությունն ընտրությունների միջոցով իրենց հեռացնի իշխանությունից եւ նոր իշխանություն ձեւավորի. ընտրողների տոտալ ցեղասպանությո՞ւն են իրականացնելու, ընտրություննե՞րն են չեղարկելու, ընտրության արդյունքնե՞րն են կեղծելու, թե՞, անկախ ընտրությունների արդյունքից, իրենց հաղթող են հռչակելու:

Հայ եւ համաշխարհային քաղաքագիտական միտքը հսկայական կորուստ կկրի, եթե Փաշինյանն ու Կոնջորյանը, եւ ոչ միայն նրանք, հեռացվեն իշխանությունից, նրանք այլեւս չեն կարողանա անհեթեթություններ դուրս տալ կամ եթե դուրս էլ տան, դա առանձնապես որեւէ հանրային արժեք չի ունենա: Բայց մի բան գուցե այդպես էլ չբացահայտվի. ինչ պայմաններում եւ միջավայրում են բուծվում ու զարգանում նման լուսավոր ուղեղները:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ՔՊ-Ի ՎՐԱ ՎԱՏ ԵՐԱՉ ԵՄ ՏԵՍԵԼ

Արա, ՔՊ, մի պահ պատկերացրեք, որ Ալիեւը «գմփացրել» է Նիկոլի բունկերը, եւ Նիկոլը չկա: Այո, պատկերացրեք, որ Իրանի դեպքն է տեղի ունեցել, եւ Հայաստանն այդ պահից վարչապետ չունի, ի՞նչ կանեիք դուք: Դուրս կգայիք փողո՞ց, ինչպես իրանցիներն արեցին, կշարունակեիք «ուրախ ավտոբուսով» քարոզարշա՞վ անել, թե՞ ձեր կուսակից Պապիկյան Սուրոյից կպահանջեիք պատասխան հարված հասցնել Ալիեւի բունկերին: Դուք ոչինչ էլ չէիք անի: Ուրուր տեսած հավերի պես կփախչեիք այս ու այն կողմ, ձեր ընտրողներին մոռացած, բեռ-բոխչա կապած՝ կլցվեիք ավտոներն ու հայդա՝ Վրաստանի սահման: Սխալվո՞ւմ եմ… Ոչ, չեմ սխալվում: Ես ավելի քան համոզված եմ, որ ձեր ռահվիրան այս տարիներին գոնե մի «տառական» չի աճեցրել, որ նման դեպքերում փոխարինի իրեն: Ցույց տվեք ինձ այդ մարդուն, եթե կա: Խնդրում եմ՝ Արարատ Միրզոյան, Արայիկ Հարությունյան, Ալեն Սիմոնյան, Վահագն Ալեքսանյան չառաջարկել: Ես այդպիսի հարվածի չեմ դիմանա:

Չկաք, տղաներ եւ աղջիկներ, չեք աճել, չեք հասել այն մակարդակին, որ ձեզնից որեւէ մեկին որեւէ մեկը պատկերացնի Նիկոլի աթոռին: Մարդիկ Նիկոլին են արդեն դժվար պատկերացնում այդ աթոռին, ուր մնաց՝ ձեզ: Թերթերը գրել էին, որ «ուրախ ավտոբուսի» «պասաժիրներն» սկսել են զզվել Նիկոլից, որ նա միայնակ է քարոզչություն անում, ինքն է որոշում՝ ով իջնի ավտոբուսից՝ ժողովրդի հետ հանդիպման, ով գլուխը դուրս չհանի, ով իր կողքին կանգնի, ով արագ ծլկի, երբ գյուղացին անհարմար հարցեր է տալիս: Ձեր զզվանքն արդար չէ, պարոնայք եւ տիկնայք ՔՊ-շնիկներ: Նիկոլը շատ լավ է ճանաչում բոլորիդ եւ ձեզնից շատ ավելի լավ գիտի ձեր ունակությունները: Կարող ենք, ի դեպ, փորձել… Լոռի դեռ հիմնավոր չեք գնացել, չէ՞: Գնացեք՝ առանց Նիկոլի, եթե կարող եք: Լոռիում ի՞նչ չկա: Լոռվա կարտոֆիլը սովետի վախտ աշխարհ էր թնդացնում… Գառան խաշլամա, քամած մածուն, արաժան, բոքոն հաց… Հա՛մ կերեք, հա՛մ քարոզարշավ արեք: Կանե՞ք: Նկատի ունեմ՝ առանց Նիկոլի կկարողանա՞ք: Չեք կարողանա, որովհետեւ այդ մի ավտոբուս «պասաժիրը» զրո է, զրո՝ առանց 1-ի:

Հիմա էլ այնպես չստացվի, թե Նիկոլին եմ մեծացնում ու կարեւորում: Նա հա՛մ ՔՊ-ի առաջնորդն է, հա՛մ էլ ՔՊ-ի ամենամեծ գլխացավանքը: Նա ինչքան պաշտոն, աշխատավարձ ու պարգեւավճար է բաժանել ձեզ, երկու այդքան էլ խայտառակել է: Խայտառակել է բոլոր առումներով՝ ոլորտ առ ոլորտ, մասնագետ առ մասնագետ, ՔՊ-շնիկ առ ՔՊ-շնիկ: Աշխատե՞լ ես Նիկոլի հետ, ուրեմն դավաճան ես, կապիտուլյանտ ես, հողատու ես, ազգակործան պատուհաս ես: Նիկոլից մի քիչ ավել, մի քիչ պակաս, բայց դա ես դու: Եթե Նիկոլը գաղափարախոսություն չունի, ուրեմն՝ դու էլ չունես: Ձեզ համար հայրենասիրությունը կեղծ կատեգորիա է, երկիրը՝ մարգագետին, անկախությունը՝ պարապ վախտի խաղալիք, պաշտոնն ու փողը՝ Աստված: Սա եք դուք: Դուք այլ կերպ լինել չէիք էլ կարող, որովհետեւ Նիկոլն է այդպիսին:

Ինչեւէ, անցնենք առավել խաղաղ զրույցի: Շարադրություն գրել կարո՞ղ եք… Հրաշալի է: Դե ուրեմն թուղթ ու գրի՛չ վերցրեք, որովհետեւ հիմա մի կես էջանոց շարադրություն եք գրելու՝ «Ինչ կանեի ես, եթե Ալիեւը գմփացներ Նիկոլի բունկերին, եւ Նիկոլը, հեռը իրանից, ոչնչացվեր»: Գրեք՝ ինչ խելքներիդ փչի, ոչնչից մի վախեցեք, ներքեւում ձեր անուն-ազգանունները չեք նշելու, անստորագիր է: Գրեք այն հերոսությունների մասին, որոնց դուք ընդունակ կլինեիք, եթե Ալիեւը գմփացներ Նիկոլի բունկերը: Խնդրում եմ միայն այնպիսի բաներ չգրեք, որ հանկարծ պատերազմ սկսվի: Դա ամենավատ նվերը կլինի ձեր առաջնորդի հիշատակին: Կարող եք գրել, որ կդիմեք Թրամփին, Կայա Կալլասին, Էրդողանին, չեք խորշի անգամ ՀԱՊԿ-ին ու Պուտինին դիմել, որ մի բան անեն…

Ժամկետների մասին: Շարադրությունները փոխանցեք ինձ մինչեւ ս.թ. հունիսի 6-ը: Հունիսի 7-ն ազատ օր է, իսկ հունիսի 8-ին ձեզ կտամ նոր շարադրություն, բայց այն մասին, թե ինչ եք մտադիր անել Նիկոլի հեռանալուց հետո, եթե նա դեռ ողջ է, ու Ալիեւը նրա բունկերը չի գմփացրել:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴԻԿ ԴԺՎԱՐ ԹԵ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՐԵՎՄՏԱՄԵՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՆԵՆ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Վիգեն Հակոբյանն** է:*

- «Էմպիրիկա» հետազոտական, խորհրդատվական ընկերության հարցումների համաձայն՝ Նիկոլ Փաշինյանից դժգոհությունը պատմական ամենաբարձր նիշին է հասել: Երեւանում հարցվածների 53%-ը ցանկանում է, որ հաջորդ վարչապետը լինի Սամվել Կարապետյանը: Փաշինյանին ընտրելու է հարցվածների 21%-ը: Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանին» կընտրի հարցվածների 34%-ը, «Հայաստան» դաշինքին՝ 20%-ը, ԲՊ-ին՝ 19%-ը: Ի՞նչ կարծիքի եք այս թվերի մասին:

- Քանի որ Հայաստանում հարցումները քաղաքական կարծիք ձեւավորելու գործիքի են վերածվել, ես դրանց միանշանակ չեմ մոտենում: Տարբեր կազմակերպություններ տարբեր հարցումներ են հրապարակում, շատ հաճախ դրանք իրարից էականորեն տարբերվում են: Այդ է պատճառը, որ ես այն ընդունում եմ ի գիտություն՝ ընդհանուր փազլ ունենալու համար: Իհարկե, պետք է նաեւ հաշվի նստել, թե ով է հարցումը պատվիրել եւ այլն: Ես սոցիոլոգիային լուրջ եմ վերաբերվում, եթե այն լուրջ սոցիոլոգիա է, սակայն մեզանում քաղաքական սոցիոլոգիան անճշտություններ է պարունակում, քանի որ հասարակության շրջանում կա որոշակի կաշկանդվածություն: Մարդիկ շատ հաճախ վախենում են ճիշտն ասել, մանավանդ, եթե հարցումը լինում է հեռախոսային: Մտածում են՝ շառից-փորձանքից հեռու, գուցե իշխանությանը ոչ հաճո կարծիք ասեմ եւ ես ու ընտանիքս կանգնենք որոշակի խնդիրների առաջ: Ինչ վերաբերում է Ձեր նշած հարցմանը, որն անցկացվել է մայրաքաղաքում, ապա ես կարծում եմ, որ, անկախ իմ բոլոր վերապահումներից, արձանագրված պատկերը կարող է լինել իրական, որովհետեւ խոսքը Երեւանի մասին է: Երեւանում եւ այլ խոշոր քաղաքներում հասարակություններն ավելի ազատ է իրեն զգում, նաեւ ավելի քաղաքականացված է, չկա մեծ կաշկանդվածություն: Այս առումով ես կարծում եմ, որ Երեւանում ընդդիմադիր տրամադրությունները շատ ավելի մեծ են, քան իշխանական տրամադրությունները: Հստակ տոկոսների մասին չեմ կարող պնդումներ անել, սակայն տենդենցը, ընդհանուր առմամբ, իրականությանը մոտ է:

- Այսինքն՝ մարդիկ, մեծ հաշվով, Փաշինյանից հիասթափված են:

- Այո, հենց դա եմ ասում: Երեւանում հատկապես ընդդիմադիր տրամադրությունները զգալիորեն բարձր են: Երեւանում 2021 թվականին էլ իշխանության հանդեպ վստահությունը ցածր մակարդակի վրա է եղել: Միշտ է Երեւանն այդպիսին եղել, բոլոր ժամանակներում:

- Արդեն քանի օր է՝ ակտիվ քննարկվում է «Միասնության թեւեր»-ի առաջնորդ Արման Թաթոյանի այն հայտարարությունը, որ եթե իրենք գան իշխանության, սերտ կհամագործակցեն Արեւմուտքի հետ, հայկական բանակը կհամագործակցի եվրոպական երկրների բանակների հետ եւ այլն: Թաթոյանը քննադատել է երկրորդ եւ երրորդ նախագահներին՝ նրանց եւս մեկ անգամ հորդորելով հեռանալ քաղաքական դաշտից:

- «Միասնության թեւեր»-ն ունի կոնկրետ խնդիր: Խոսքը դիրքավորվելու մասին է, ցույց տալու, որ ինքը երրորդ ուժ է: Երրորդ ուժ՝ նշանակում է ոչ նախկին, ոչ ներկա: Այդ պատճառով էլ նա առաջին իսկ ելույթներից հայտարարել է, որ իր համար նախկին նախագահների մասնակցությունն անընդունելի է, եւ խիստ անընդունելի է նաեւ Նիկոլ Փաշինյանը: Այդ ճանապարհով Թաթոյանը փորձում է հավաքել չկողմնորոշվածների քվեները: Քիչ չեն մարդիկ, ովքեր դեմ են թե՛ ներկաներին եւ թե՛ նախկիններին, Թաթոյանն այս պարագայում հենց այդ այլընտրանքն է: Ինչ վերաբերում է նրա պրոարեւմտյան հայտարարություններին, ապա դա էլ է հասկանալի: Թաթոյանը փորձում է դիրքավորվել որպես ազգային-լիբերալ քաղաքական ուժ եւ հավակնում է նաեւ չկողմնորոշվածների ու արեւմտամետների ձայներին: Այստեղ էլ բավականին լուրջ չմշակված զոնան փոքր չէ, եւ ես կարծում եմ, որ Թաթոյանն ընկալվում է որպես լիբերալ ուժ, որի համար կարեւոր է նաեւ ազգայինը: Նրան կարող են ընտրել նաեւ երիտասարդ շրջանակները: Վերջին շրջանում «Ուժեղ Հայաստան»-ը եւս այդ ուղղությամբ է փորձում գնալ: Նրանց մշտապես ասոցացրել են ռուսների հետ, երբեմն մեղադրել են անգամ, սակայն նրանք եւս վերջին շրջանում բավականին կոմպլեմենտար են իրենց դրսեւորում: Օրինակ՝ նրանց մշակած անվտանգային կոնցեպտի վրա աշխատող փորձագիտական խմբերը տարբեր երկրներից են ներգրավված, ես ուսումնասիրեցի եւ այնտեղ չտեսա ռուս որեւէ գործչի: Ներգրավված էին ԱՄՆ-ից, անգամ՝ Իսրայելից, Հունաստանից.... այսինքն՝ նրանք եւս փորձում են պրոարեւմտյան ընտրազանգվածին իրենց կողմը քաշել: Յուրաքանչյուրն իր ձեւով է դա անում: Ես չեմ կարծում, որ արեւմտամետ մարդիկ գնալու են Փաշինյանին ընտրելու՝ միայն այն բանի համար, որ նա ժամանակ առ ժամանակ այցելում է Եվրոպա եւ ելույթներ ունենում: Մտածող մարդիկ, ովքեր իրոք արժեհամակարգային առումով Արեւմուտքի կողմնակիցն են, դժվար թե Փաշինյանի վարած քաղաքականության մեջ արեւմտամետության աղերս տեսնեն: Նա մեկ գնում է ԵՄ, մեկ չի գնում: Գնում է՝ Մոսկվա, ասում է՝ չենք գնում դեպի Արեւմուտք, գնում է Բրյուսել՝ հակառակն է պնդում:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԻ ՀՅՈՒՐԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳՎԱԾ Է

2020թ. հունվարի 15-ին պետք է ուժի մեջ մտեր այն որոշումը, որով անասունների մորթը պետք է կատարվեր միայն դրա համար նախատեսված, սանիտարական համապատասխան պայմաններ ունեցող սպանդանոցներում: Բակերում անասունների մորթն արգելվելու էր: Հետո կառավարության որոշման ժամկետը հետաձգվեց մինչեւ 2020 թ. հուլիսի 1-ը, ապա այդ որոշման կիրառումը հետաձգվեց: 2020-ին նախատեսված էր Տավուշի մարզում շահագործման հանձնել 11 սպանդանոց: Սակայն այդ սպանդանոցների գործարկումը չկատարվեց, քանի որ գոյություն ունեին փաստաթղթային խնդիրներ, նաեւ՝ հողահատկացման հետ կապված հարցեր: Սպանդանոցներ գործարկելու մտադրություն ունեցող գործարարները մտմտում էին, թե արժե՞ մեծ ծախսեր կատարելով՝ սպանդանոցներ հիմնել, դրանք կարո՞ղ են շահույթ ապահովել:

Նախկինում Տավուշի մարզպետարանից ինձ հայտնել էին, որ մեկական սպանդանոց է գործում Իջեւանում, Նոյեմբերյանում, Բերդում եւ Դիլիջանում: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին 2024թ. ապրիլի 30-ին հարցում եմ արել, թե Տավուշի մարզի որ բնակավայրերում են սպանդանոցներ գործում, Դիլիջան քաղաքի ու Դիլիջան համայնքի 6 գյուղերի անասունները որտե՞ղ են մորթվում: 2024թ. մայիսի 6-ին Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Մարզում գործում է 5 սպանդանոց՝ 1-ական Նոյեմբերյան (ք. Նոյեմբերյան), Դիլիջան (ք. Դիլիջան), Իջեւան (գ. Գետահովիտ) համայնքներում, 2 հատ Բերդ համայնքում (ք. Բերդ եւ գ. Նավուր)»: Մարզպետարանի պատասխանում նշված է, որ դրանցից մեկը Դիլիջանում է: 2025թ. սեպտեմբերի 16-ին մարզպետին նոր հարցում եմ արել. «Ի պատասխան իմ 2024թ. ապրիլի 30-ի հարցման, հայտնել եք, որ Դիլիջանում սպանդանոց է գործում: Որտե՞ղ է սպանդանոց գործում, ո՞ր կազմակերպության կողմից է այն շահագործվում, ո՞ր տարածքում»: Մարզպետարանից հայտնել են. «Ձեզ ներկայացված նախկին տեղեկատվությունից հետո անցած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում մեր կողմից նշված սպանդանոցի շահագործումը դադարեցվել է»: Իրականում, Դիլիջանում 2024-ին օրինական կարգով սպանդանոց չի գործել, որ դրա շահագործումն էլ 2025-ին դադարեցվեր: 2026թ. մարտի 17-ին մարզպետ Հ. Ղալումյանին տեղեկատվական նոր հարցում եմ արել. «Դիլիջան համայնքում ե՞րբ է սպանդանոց գործարկվելու, ներկայում Դիլիջան քաղաքում վաճառվող, Դիլիջանի սննդի կետերում իրացվող միսը ո՞ր սպանդանոցներում անասունների մորթի արդյունք է»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Դիլիջան քաղաքի մսի կետերում վաճառվող մսամթերքը մոտակա տարածքներում գործող սպանդանոցների մսեղիքն է, իսկ Դիլիջանի սպանդանոցը կգործի մոտակա ժամանակներում»:

Սա, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը, Դիլիջանին ամենամոտ սպանդանոցները քաղաքից 34 կմ հեռավորությամբ գտնվող Իջեւան, Վանաձոր քաղաքներում են, դիլիջանցիներն անասուններին բեռնատարներով Իջեւան ու Վանաձոր չեն տեղափոխում, որ այնտեղ մորթեն: Մարզպետի նշած «մոտակա ժամանակները» շատ անորոշ է, այլապես կհայտներ, որ Դիլիջանում սպանդանոց կգործարկվի, օրինակ, 2026 կամ 2027 թվականին: Դիլիջանում գործում են տասնյակ հյուրանոցներ, մոթելներ, ռեստորաններ, սրճարաններ, որտեղ մատուցվող մսեղիքը սպանդանոցային ծագում չունի: Դիլիջանի, համայնքի գյուղերի բնակիչների, տուրիստական Դիլիջանի հյուրերի առողջությունը վտանգի տակ է, քանզի այդտեղ իրացվող միսը սպանդանոցային ծագում չունի, այն կարող է հիվանդ, վարակված անասունների մսեղիք լինել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Սյունիքում 43 դպրոց ջեռուցվում է փայտով

«ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի» շրջանակներում ավելի շատ դպրոցներ կփակվեն Սյունիքի, Շիրակի եւ Լոռվա մարզերում: Գրավոր հարցում էինք ուղարկել Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին. 2026-ին ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է լուծարել 231 հանրակրթական դպրոց Հայաստանի ողջ տարածքում: Սյունիքի մարզի որ համայնքներում քանի դպրոց կփակվի: Օպտիմալացվող դպրոցների արդյունքում քանի՞ ուսուցիչ գործազուրկ կդառնա:

Պատասխանն այսպիսին է. «Սյունիքի մարզում 2026թ. ներկա դրությամբ փակված, օպտիմալացված դպրոցներ չկան: Հարցերի վերաբերյալ պարզաբանումների համար դիմել տվյալ ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող վերադաս մարմնին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարություն»:

Հարցրել էինք նաեւ՝ «300 դպրոց, 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում Սյունիքի մարզում քանի՞ դպրոցի, մանկապարտեզի շենք է կառուցվել, հիմնանորոգվել, քանիսի՞ շինարարության, հիմնանորոգման աշխատանքներն են այժմ ընթացքի մեջ: «Ներկա դրությամբ ծրագրի շրջանակներում ավարտվել է 10 դպրոցի կառուցում, հիմնանորոգում, 35-ի աշխատանքներն ընթացքի մեջ են: Ծրագրում ընդգրկված 7 դպրոցի շինաշխատանքները դեռ չեն մեկնարկել: Ավարտվել է 17 մանկապարտեզի կառուցում/հիմնանորոգում, 18-ի աշխատանքներն ընթանում են, մեկինը դեռ չի սկսվել»:

Սյունիքի մարզում կան հանրակրթական դպրոցներ, որոնք ձմռան ամիսներին վառելափայտով կամ էլեկտրական հոսանքով են տաքացվում, քանի՞սն են դրանք: «Սյունիքի մարզում փայտով ջեռուցվում է 43 դպրոց, հոսանքով՝ 18, փայտով եւ հոսանքով՝ 5»:

Չորս տարի Սյունիքի մարզը ղեկավարած Ռոբերտ Ղուկասյանը գիտակցաբար չի բարձրաձայնում տասնյակից ավելի դպրոցների փակվելու եւ հարյուրավոր ուսուցիչների գործազուրկ մնալու փաստի մասին: Չի բարձրաձայնում, քանի որ առջեւում ընտրություններ են: Ըստ մարզի բնակիչների՝ մարզպետը բոլ-բոլ աշխատավարձ ու պարգեւավճար է ստանում՝ «կյանքը՝ ուրախ, ապրուստը՝ ձրի», ինչո՞ւ պետք է Սյունիքի սահմանամերձ համայնքների հիմնախնդիրներով մտահոգվի: Ի դեպ, նա 4 տարվա ընթացքում երբեւէ սեփական կարծիքը չի հայտնել:

*Հարցազրույց արձակագիր, դրամատուրգ **Գուրգեն Խանջյանի** հետ*

ԺԵՇՏԻ ԿՏՈՐԸ ԿՊՑՐԵԼ Է ԿՐԹՔԻՆ, ԱՉՔՆԵՐՍ Է ԽՈԹՈՒՄ, ԹԵ՝ ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է, ՈՐՆ ԻՆՔԸ ԲԶԿՏԵԼ Է



- Քարտեզը, որ Փաշինյանը փակցրել է կրծքին ու ման է գալիս, արդյո՞ք մենք այդ սահմաններով Հայաստան ունենք այսօր: Չէ՞ որ հենց ինքն է բզկտել մեր քարտեզը, իսկ մյուսներից հարգանք է պահանջում տարածքային ամբողջականության նկատմամբ:

- Իր կրծքին փակցրած քարտեզի ներքեւից, իմ պատկերացմամբ, արդեն մի 2 սմ պիտի կտրի. հողի վրա տասնյակ կիլոմետրեր են, Մեղրին է, Սյունիքը, որն ինքն արդեն տվել է, սուսուփուս: Ինքն ինչի դեմ խոսում է, ասենք՝ Քոչարյանը Մեղրին իբր փոխելու էր Ղարաբաղի հետ, իմացիր՝ շուտով դա ինքն է անելու եւ արեց: Ո՞ւմ է տվել. նախ՝ Ամերիկային, Թրամփին: Իսկ Թրամփն ուր մտնում է, քանդուքարափ է անում, տեսնում ենք: Թրամփի շահը ո՞րն է, Մեղրու միջանցքից ակնկալվող այդ մի քանի դոլլարը, իհարկե՝ չէ, քաղաքական շահն է: Այսինքն, ինքը մեզ ուզած ժամանակ ներքաշելու է քաղաքական այս կամ այն արկածախնդրության մեջ: Իսկ որոշ ժամանակ հետո, եթե Իրանի հետ հարաբերությունները կարգավորվեն, իրեն արդեն պետք չգա Սյունիքը՝ վերավաճառելու է: Իսկ ո՞վ է գնելու. բնականաբար՝ ադրբեջանցին կամ թուրքը: Նիկոլը Սյունիքն արդեն տվել է, ես այդպես եմ տեսնում: Այդ ժեշտի կտորը, որ կպցրել է կրծքին եւ անընդհատ աչքերս է խոթում, թե իրական Հայաստանն է, ինքն արդեն բզկտել է, վերից, վարից, կողքից, կրծոտել է իր սիրած կուկուռուզի պես: Սահմանազատումը չսկսված՝ Գորիս-Կապան ճանապարհն ինչո՞ւ ես տալիս: Ես չեմ կարծում, որ հիմա սկսվել է այդ սահմանազատումը: Ո՞ւր է՝ աջից, ձախից տարածքներ տվեց, ու դրանով ավարտվեց սահմանազատումը, մինչեւ Ալիեւի նոր նկրտումները: Բացի էդ ժեշտի կտորից՝ կա մեծ Հայրենիք, որը մեր սրտի մեջ է, որն էդ ժեշտով չափելի չէ, պատմականով է, հոգեւորով, ուզում է մեր սրտերն էլ մտնի՝ իր անհայրենիք խմբագրումներն անի: Չի ստացվելու: Փաստորեն, այս մարդն ու իր թիմն էկզիստենցիալ, գոյաբանական դավաճանություն են իրականացնում Հայաստանի, հայ ազգի նկատմամբ: Որովհետեւ նրանց դավաճանությունը չի սահմանափակվում այս ժամանակահատվածով, նրանք մեր խորհրդանիշներն են ջնջում ժամանակի մեջ, Հոգեւոր Հայաստանն են ջնջում, հերոսների անուններն են մոռացնել տալիս, Եկեղեցին են ուզում կազմաքանդել: Այսինքն, սրա արմատները գնում են ետ, հասնում մինչեւ Հայկ ու Արարատ ու տարածվում նաեւ առաջ՝ ապագայի վրա, որովհետեւ եկող սերնդին ինչ գաղափարախոսություն է մատուցվում, ինչ է սովորելու սրանց հանձնվողական քարոզչությունից, երեխան սրանց կրծոտած, կրտած պատմության դասագիրքը վերցնի՝ ինչ պատկերացում պիտի կազմի իր հայրենիքի մասին: Սա տոտալ դավաճանություն է մեր ազգի նկատմամբ: Եվ ցավալին այն է, որ մենք հանդուրժում ենք, գլխներիս դրել՝ տանում ենք այս իշխանություններին: Ու եթե թույլ տանք, որ եւս մի անգամ վերընտրվեն, դա արդեն իսկապես կործանում է լինելու: Եթե եւս 5 տարի իրենք այս խանդավառությամբ Հայաստանի հերն անիծեն, դա արդեն վերջն է լինելու՝ հայի տեսակի ու Հայաստան երկրի:

- Իսկ հազարամյակներով ստեղծած մեր պատմական եւ մշակութային արժեքներն այս «իրական Հայաստանի» մեջ տեղավորվո՞ւմ են: Քարոզում են, թե ինչը կապ չունի այդ թիթեղի վրա պատկերված տարածքի հետ, պետք է մոռանանք. սկսած մեր իրական հոգեւոր արժեքներից՝ գողթան երգերից, Մատենադարանի ձեռագրերից, էպոսից, Նարեկացուց մինչեւ նորագույն շրջան, բոլորն այդ թիթեղի սահմանած տարածքում չեն ծնվել, ապրել: Սա ո՞ւր է տանում՝ իրական Հայաստան՝ առանց հոգեւորի ու արմատների՞:

- Օտարում են մեզ մեզնից, զրկում բովանդակությունից: Իրենք երբեք էլ չեն խոսում քո նշած արժեքների մասին: Իրենք հաստատել են, որ իրենց հերոսը հարկատուն է: Երբեւէ տեսա՞լ ենք, որ մեր իշխանավորները խոսեն մշակույթից, արվեստից, գրողներից, նկարիչներից, կոմպոզիտորներից, գուցե հասու չեն, բայց գոնե մակերեսորեն հիշատակեն: Երբ եկավ իշխանության, ի՞նչ արեց առաջնահերթ. վերացրեց պետական մրցանակը, նախագահի մրցանակը, որ տրվում էր արվեստի, մշակույթի, գիտության գործիչներին: Իրենց պետք չէր, հոգեւորը պիտի դուրս գար, հետին պլան անցներ, պիտի մնար չոր պրագմատիզմը: Լիբերալ գաղափարներով տոգորված մարդիկ են: Մեր ընկերների, ծանոթների կամ այլ շրջապատում երբ խոսում ենք մեր կորուստների մասին, աչքերի մեջ ցավ ենք տեսնում, ափսոսանք, ողբերգություն: Իսկ սրանք ինչի մասին էլ խոսեն, ես ոչ մեկի աչքերի մեջ ո՛չ ցավ եմ տեսել, ո՛չ ափսոսանք: Անհայրենիք մարդիկ են, թքած ունեն՝ հող է, երկիր է, հայ մարդ է: Իշխանություն ունենալու տարածք է ընդամենը: Գոնե վարչապետը, որ հաստատ ատում է արցախահայերին. լսեցինք նրա արտահայտությունը՝ ես Հայաստանը փրկեցի Ղարաբաղի կապանքներից: Այսինքն, խոստովանում է, որ ինքն է հրահրել պատերազմը, պարտվել, հազարավոր զոհեր տվել, որ «փրկի» Հայաստանը: Եվ ի՞նչ, հիմա, երբ չկա Արցախը, եւ այդ կողմից բաց են մեր սահմանները, փրկվա՞ծ ենք: Չեմ կարծում, թե գոնե այդ «իրական Հայաստանի» հայերին ինքը սիրում է: Չէ, դա պարզ երեւում է իր պահվածքից, հայատյաց է: Հիմա քվեներ են պետք, դրա համար է իրեն պատեպատ խփում. սրա-նրա պայուսակն է տանում, կրծքանշան նվիրում, սրտիկ ցույց տալիս, անդադար ուտում, չգիտեմ, թե ինչ խեղկատակություններ անում... Բա էն ավտոբուսը, նայում ես՝ ոնց որ մանկապատանեկան ուսումնարանի սաներ լինեն: Էդ ի՞նչ թռչկոտել եք՝ թռչկոտում, անմեղսունակ մանկամիտների պես, ինչի՞ առթիվ եք ուրախ թռչկոտում, ի՞նչ մի լավ բան եք արել... Ապշելի են այս անլրջությունը, թեթեւսոլիկությունը: Երկիրը կործանման եզրին են հասցրել՝ պարում են, սրտիկ են ցույց տալիս, զվարճանում են: Մենք այսպիսի՞ իշխանություն ենք երազել...

- Արդեն 8-րդ տարին է՝ երկիրը ղեկավարում է, մենք կարող ենք կորուստներն ու ողբերգությունները շարունակ թվարկել, մինչդեռ ինքը համարում է աննախադեպ ձեռքբերումների, պետության եւ պետականության կայացման շրջան: Այս տխուր կրկեսը շարունակվելու դեպքում ի՞նչ է մեզ սպասվում. առջեւում ընտրություններ են:

- Ծնկած, խեղճացած իշխանություն է: Երբ ինքն այցելության է գնում ուրիշ երկիր, ամաչում ես, որ սա քո երկրի ղեկավարն է: Գնացել էր Վրաստան՝ լուրջ բանակցությունների, հազար ու մի խնդիր կա, բայց ինքը թմբուկ է զարկում, աշուղ է դարձել: Գոնե կարգին թմբուկ զարկել իմանա, չէ, էստեղ էլ է դիլետանտ, ամեն տեղ է դիլետանտ: Կառավարության նիստի ժամանակ ինքն իր բերանով ասում էր, որ 7 տարի մնացել են առաջին դասարանում: Ստացվում է, մենք մեր հարկերից էդ մարդկանց ուսման վարձն ենք տալիս, որ սովորեն: Երկրի փողերն ու պարգեւավճարները տանեն, երկիրն էլ սպասի, թե երբ են դառնալու արհեստավարժ մասնագետներ, եթե երբեւէ դառնալու են: 30 տարի բանակցությունները տարվում էին այն տրամաբանությամբ, որ Հայաստանը տարածքային պահանջներ չունի, արցախահայության ինքնորոշման իրավունքն ու անվտանգությունն է պաշտպանում, միջազգային հավասարակշիռ վերաբերմունքն էլ էր դրա վրա հիմնվում, Մինսկի խմբի գործունեությունն էլ: Ալիեւի ձեռքերն էլ կապված էին դրանով: Իսկ այս մարդը եկավ ու հայտարարեց, թե Արցախը Հայաստան է եւ վերջ: Պատահակա՞ն էր. ո՛չ, դա պատերազմի բացահայտ հրավեր էր, որովհետեւ դրանով Նիկոլը, փաստորեն, ի լուր աշխարհի հայտարարեց, թե տարածքային պահանջներ ունենք: Ու փլցրեց ամբողջ բանակցային կառույցը ու բացազատեց Ալիեւի ձեռքերը: Իսկ վաղն արդեն փափուկ ուժով, նրանք մի քանի տասնամյակում հանգիստ կգրավեն Հայաստանը (Բաթումը՝ վկա). տներ կառնեն, բիզնեսներ կդնեն, էլ չեմ ասում՝ իրենց նշած 300 հազարի վերադարձը: Ո՞վ է դեմը կանգնելու՝ էս կապիտուլյանտնե՞ը: 30 տարիների բոլոր ձեռքբերումները զրոյացրին: Մեզնից ովքեր ազգասեր են, ազգային արժանապատվություն ունեն, կթողնեն կգնան երկրից, կմնան նրանք, ովքեր պատրաստ կլինեն գլխիկոր սպասարկելու թուրքի շահը, թուրքի հայաստանյան խրախճանքը: Կարծում եմ, ընդդիմությունն իր եռանդի մեծ մասը պիտի ծախսի դրա վրա՝ ժողովրդին բացատրի, թե ինչ է սպասվում իրենց, եթե այս իշխանությունները նորից մնան: 21 թվականին ասում էինք՝ չլսեցին, արդյունքը տեսանք, էլի՞ գնանք արկածախնդրության: Եթե ժողովրդի մեծ մասը համաձայն է դառնալ թուրքի սպասարկու եւ իրենց ձայնը նորից կտա ուսապարկերին ու բռնապետին, արդեն չգիտեմ էլ ինչ ասեմ, ինչ բնորոշում տամ մեզ: Ի դեպ, «ուսապարկ» բնորոշումը, կարծեմ, իրենցից մեկն է տվել իրենց ու շատ դիպուկ: Գոնե մեկ անգամ տեսնեինք, որ նրանցից գոնե մեկը համարձակվի որեւէ հարցով այլ կարծիք ունենալ, ո՛չ՝ միաձայն են, հանց ռոբոտներ: Եվ ինչպիսի ստորաքարշություն, իրենք ուսապարկն են մի մարդու, որն ինքը վախեցած է, կծկված դրսում, իսկ ներսում հանկարծ աքլորանում է, գոռգոռում, ձեռքերը հիստերիկ թափ տալիս, անհեթեթ շարժումներ անում... Ապշում ես, մենք սրա՞ն էինք արժանի: Հիշենք մեր բոլոր առաջնորդներին, իրենց մեծ կամ փոքր սխալներով հանդերձ, արժանապատվություն են ունեցել, պատիվ, իրենց պատեպատ չեն խփել, ո՛չ ջղացնցվել են, ո՛չ սրտիկ ցույց տվել: Ինձ թվում է, որ ժողովրդի մի մասը մինչեւ հիմա էլ դեռ խաբվածության մեջ է մնում: Ինքն արհեստավարժ պոպուլիստ է, կարողանում է խաբել, ստել, կեղծել, մանիպուլացնել: Միամտություն կա հայերիս մեջ, հեշտ ենք հավատում, բայց հուսանք, որ սիրահարվածների, կռապաշտների թիվը պակասում է: Նաեւ հնարավոր է՝ ընտրակեղծիքներ լինեն, վերընտրվելու համար իրենք ամեն ինչի պատրաստ են: Պիտի ընդդիմությունն իր ձայներին տեր կանգնի: Թույլ չեն, ուժեղ մարդիկ են, պիտի կարենան: Եթե այս անգամ էլ չկարողացան, ես կսկսեմ կասկածել, որ պարզապես չուզեցին:

- Կա՞մ մի արժեք ու սրբություն, որ պղծած չլինեն, որոնք մեզ համար, թվում էր, կարմիր գծեր էին: Հասարակությունն անտարբեր թմբիրի մեջ է, իսկ մտավորականությունը, որ այդ արժեքների կրողն ու պահապանը պետք է լիներ, մեծ մասով անհաղորդ է: Կե՞ղծ ենք, սո՞ւտ ենք, միայն գրպան ու ստամո՞քս ենք՝ անկախ մեր թվացյալ առաքելությունից:

- Ոչ բոլորն են այդպես: Մտավորականների մի խումբ կա, որ ակտիվ է, արձագանքում է, մի մեծ խումբ էլ կա, որ ներքուստ ընդվզում է, համաձայն չէ, բայց չի արտահայտվում, ինչ-որ բանից վախենում է: Բայց այդպես վախենալով հեռուն չենք գնա, էդ ընդվզումը, ըմբոստությունը պիտի կայանան, դուրս բերվեն հրապարակ: Կան առանձին մտավորականներ՝ ռեժիսորներ, դերասաններ, գրողներ, նկարիչներ, գիտնականներ, որ խոսում են, արտահայտվում են, բայց կան նաեւ այնպիսիք, որ առավոտից իրիկուն, նստած՝ Նիկոլի գովքն են անում: Վաղը, երբ եւ եթե իշխանություն փոխվի, իրենք էլ են պատասխան տալու, ամեն մեկը՝ իր չափով: Էդ պատասխանը տալու են վաղ թե ուշ, չեն խուսափելու:

- Հանուն արդարության ասենք, որ այսօր Նիկոլ գովերգողների մեծ մասը ժամանակին Սերժ էր գովերգում: Եթե վաղը Մեհրիբան Ալիեւան եկավ Հայաստանում իշխանության, սրանք հայտնվելու են նրա աղախնոցում՝ անկախ սեռից, միայն թե կերակրամանին մոտ լինեն: Ես կարեկցում եմ Նիկոլ ընտրած կուկուռուզ ծախողին, բայց այդ «մտավորականների» համար գետինն եմ մտնում, որոնց զգալի մասը մեր ընկերներն են:

- Կարծում եմ, մենք կտեսնենք նրանց մետամորֆոզները, կտեսնենք, թե ինչպես են արագ փոխվում. կսկսեն չքմեղանալ, արդարանալ, նոր իշխանություններին գովերգել, շողոքորթել:

Հուսիկ Արա

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՔՊ-ՇՆԻԿ ՏԵՍՆԵԼԻՍ «ՂԶՂՆՈՒՄ» Է, ՔՖՈՒՐ Է ՏԱԼԻՍ

Փաշինյանն ու ՔՊ-ն ոչ թե մեկ կուսակցություն են՝ մեկ առաջնորդով, այլ՝ «մրցակիցներ», որտեղ Փաշինյանի հակառեյտինգը մրցում է ՔՊ-ի հակառեյտինգի հետ: Ավելի պարզ ասեմ՝ Փաշինյանի հակառեյտինգը տարածվում է ՔՊ-ի վրա, իսկ ՔՊ-ի հակառեյտինգը՝ Փաշինյանի: Եվ ստացվում է, որ այս նախընտրական փուլում նրանք ոչ թե փոխլրացնում են միմյանց ու փակում երկուստեք բացերը, այլ բզկտում են միմյանց: Չէի ասի՝ միտումնավոր: Ուղղակի այդպես է ստացվել, եւ այսօր ո՛չ Նիկոլը, ո՛չ ՔՊ-ն, ո՛չ էլ որեւէ երրորդ կողմ չի կարող շտկել այդ վիճակը:

Տեսեք՝ ինչ է կատարվում… Ուրեմն Արցախը հանձնել են, Հայաստանի որոշ տարածքներ դրել են օկուպացիայի տակ, լիքը անմեղ մարդու գլուխ են կերել եւ հիմա «չորս ոտքը» գազին դրած՝ փախնում են, կարելի է ասել՝ ճողոպրում են պատասխանատվությունից: Թվում է՝ բոլորով մի գործ են անում, բայց երբ Ալեն Սիմոնյանին դավաճան, հողատու, կապիտուլյանտ են անվանում, նա սկսում է արդարանալ միայն իր փոխարեն՝ կարո՞ղ եք ապացուցել, որ ես որեւէ առնչություն եմ ունեցել Արցախի հանձնման, Հայաստանի օկուպացիայի եւ մնացած բաների հետ: Մնում է ասի՝ ձեր խոսքերի հասցեատերը Հայաստանի վարչապետն է, ոչ թե՝ ես: Նիկոլն էլ իր հերթին առիթը բաց չի թողնում՝ այնպիսի բաներ անելու, որ հանրությանը ցույց տա, թե ովքեր են իր կողքինները եւ ինչ են իրենցից ներկայացնում: Ի՞նչ արժե, օրինակ, «կառավարությունը ես եմ» արտահայտությունը: Դա նույնն է, թե ասեր՝ անփոխարինելի գեղղեկը ես եմ, իսկ մյուսները բացառապես ապուշի դեր են խաղում իմ թատրոնում (Հակոբ Պարոնյանի ականջը կանչի): Եկեղեցու դեմ արշավը վերցնենք: ՔՊ-ում, ըստ ձեզ, քանի՞ մարդ կա, որ Նիկոլի հետ ժամանակին պայմանագիր է կնքել՝ Վեհարանը կաթողիկոսից ազատելու մարմաջով: Չկա այդպիսի ՔՊ-շնիկ: Բայց տեսա՞ք, թե ինչ եղավ… Է՛լ կեղծ պատարագներ, է՛լ սպառնալիք, թե հեսա Էջմիածնում «սուրբ» հանրահավաք ենք անում, է՛լ տիրադավ եպիսկոպոսների տասնյակ, է՛լ նշանակովի թեմակալ առաջնորդներ, է՛լ հոգեւորականների բանտարկություններ: Բայց մենք հո տեսնո՞ւմ էինք, որ ուր գնում՝ ՔՊ-ին հետն էր տանում: Բա էն «ուղտերթը»… Եվ քանի՞ ՔՊ-շնիկ կգտնեք այսօր, որ ասի՝ եղբայր, ես էլ եմ պատասխանատու այդ խայտառակության համար: Չեք գտնի, բոլորը կասեն՝ ձեր մեղադրանքների հասցեատերը ես չեմ: Բա որ չէիր ուզում Եկեղեցին քանդել, ինչո՞ւ էիր, ականջներդ կախ, գնում նրա կեղծ պատարագներին, նրա կողքին ծնրադրում տիրադավ տերտերների առաջ: Պատասխան չունեն:

Ուրախ ավտոբուս, սրտիկ-մրտիկ, վարչաբենդ… Այսպես, փուլ առ փուլ, վարչապետը ցույց է տալիս, որ ՔՊ-ում գաղափարական խսան չկա: Կասի՞ վարտիքներդ իջեցրեք հանրության առաջ, կիջեցնեն առանց հակաճառելու: Ընդ որում՝ թե՛ կին, թե՛ տղամարդ: Իսկ մետրոյի սկանդա՞լը… Քանի՞ ՔՊ-շնիկ դատապարտեց նրա պահվածքը: Բայց ՔՊ-ում պատվի մարդ կա՞, որ մի հատ էլ դատապարտեր, ասեր՝ հո դու է՞շ չես, արա, դրանով մեզ էլ ես խայտառակում: ՔՊ-ից այդպիսի մի ձայն հնչեր, հավատացնում եմ, կառավարության նիստին հաջորդած հարցուպատասխանի ժամանակ նույն էշությունները դուրս չէր տա ու ավելի չէր խայտառակի ՔՊ-ին:

ՔՊ-ն էլ իր հերթին առիթը բաց չի թողնում՝ խայտառակելու վարչապետին: Երկու օր առաջ Ալեն Սիմոնյանը, օրինակ, սեփական օրինակով ցույց տվեց, որ Փաշինյանի վարած քաղաքականության պատճառով ՔՊ-շնիկները չեն կարողանում նույնիսկ ԱԺ շրջակայքում փողոց դուրս գալ: Ժողովուրդը ՔՊ-շնիկ տեսնելիս «ղզղնում» է, քֆուր է տալիս, հակադարձում մեկին՝ տասը: Բայց եկեք մի հատ Նիկոլին հարցնենք՝ ինչո՞ւ է այդպես, պարոն Փաշինյան, դուք ձեզ մեղավոր չե՞ք զգում, երբ ժողովուրդը նեղացնում է ձեր թիմակցին: Իսկույն ձեռքերը կլվանա՝ դեպքը Ալենի հետ է պատահել, նրան էլ հարցրեք…

Ալենը, ի դեպ, միայնակ չէ ՔՊ-ի ու Նիկոլի ռեյտինգները հավասարապես ոչնչացնելու գործում: Նա մի տեղակալ ունի՝ Ռուբեն Ռուբինյան անունով… Այո, Քըլըչի մոտ Նիկոլի, Էրդողանի եւ Ալիեւի հանձնակատարը: Դրան մեկդ ասեք՝ տղա ջան, Աստված էշին այնպես է ստեղծել, որ այդ կենդանին կարողանա իր կյանքում մեկ-երկու անգամ խելացի զռալ: Հույս կա՞, որ քանի իշխանություն եք, մի խելացի բան կասեք կամ հայտարարություն կանեք: Հլա կարդա ասածդ. «Պարզ է, որ Դադիվանքը հայկական է, բայց ինչո՞ւ չեք ասում, որ Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցին մերն է…»: Հնարավո՞ր է, արդյոք, այս ցնդաբանությունը որեւէ կերպ մեկնաբանել, եթե Նիկոլի մանիպուլյացիոն գործիքներին չես տիրապետում: Հնարավոր չէ: Դրա համար էլ իմ ունեցած միակ գործիքով ասում եմ՝ էշություն ես դուրս տվել, տղա ջան:

Կարող է հարց առաջանալ՝ ո՞ւմ հակառեյտինգն է ավելի ուժեղ՝ Նիկոլի՞, թե՞ ՔՊ-ի: Ես կասեի՝ երկու հակառեյտինգն էլ արժանի են ուշադրության: Աչքաչափով դրանք գրեթե հավասար են, բայց Նիկոլինը, կարծես, ավելի հիմնավոր է եւ անշրջելի:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 28.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ՝ ՍՆՆԴԱԿԱՐԳԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՎ

Գիտեմ՝ այս նամակն էլ «առ եք համարելու», ինչպես «առ եք համարել» հազարավոր ողջամիտ մարդկանց զգուշացումները՝ «Նիկոլ, կանգ առ»: Մեր իմաստուն Տեր, գիշեր-ցերեկ խորհում եմ Ձեր դեռեւս չօգտագործված հնարավորությունների մասին: Դուք, իհարկե, ունեք պրպտուն միտք եւ անսպառ եռանդ, բայց բաներ կան, որ հազիվ թե մտքովդ անցած լինի: Ականջ արա՝ ասեմ: Ուղիղ ճանապարհներ կան, որ տանում են դեպի այն գագաթը, որին արդեն սովոր ես, բայց որից անդին անհատակ անդունդն է…

Երկար եմ մտածել՝ ինչ է պակասում Ձեր արդեն գրեթե հավերժ կառավարմանը: Եվ գտել եմ: Մի բան կա, որ չեք արել, բայց պետք է անպայման անեք: Մինչեւ վերջ կարդացեք գիրս: Գլխավորը վերջում է: Սկսեմ ամենապարզից: Ձեր ուրախ ավտոբուսում սեղանը թերի է՝ կերուխումի ցանկը առաջարկում եմ լրացնես կարեւոր բաղադրիչով՝ արեւածաղկի սերմեր՝ սեմուշկա: Պեռաշկի, կուկուռուզ, սուջուխ, կարտոլ շարքի հաջորդը սեմուշկա չրթելն է: Չրթել, թքել գետնին: Թող ժողովուրդը տեսնի, թե ինչ հանգստությամբ եք չրթում-թքում: Ի՜նչ վստահությամբ: Եվ կհասկանա՝ սրանք հասարակ տղաներ չեն, սրանց դեմ խաղ չկա: Մարդիկ կմտածեն՝ «Սրանք մարդիկ են, որոնք չեն թաքցնում իրենց ուժն ու հունարը», հետո էլ մեր պես սեմուշկա են չրթում: Չրթեք ու կլեպը պարտադիր թքեք: Թող պատկերն ամբողջական լինի: Բայց սեմուշկան ներքին սպառման համար է, այ, միջազգային հանրությանն ուղղված սննդատեսակների առումով առաջարկում եմ խոզի տոտոխը: Այ թե նորություն կլինի: Խոզի տոտոխն արդեն քաղաքական հայտարարություն է: Բաց, կոպիտ, անթաքույց, համարձակ, որ անչափ սազում է Ձեր բնույթին: Դուք ասում եք՝ «ես ինքնիշխան եմ ու խաղաղություն եմ բերել»: Եվ Ալիեւը, գերտերությունների ղեկավարները նայում են, թե ինչպես եք խոզի տոտոխ ոչնչացնում: Հանգիստ: Հաճույքով: Ցուցադրաբար: Ու հասկանում են՝ այս մարդը վախ չունի ոչնչից: Ո՛չ հավատքի, ո՛չ ավանդույթի հետ կապված ոչ մի խնդիր: Ալիեւը կարո՞ղ է տեսախցիկների առաջ խոզի տոտոխ ուտել, իհարկե՝ ոչ: Հաջորդ մարտահրավերը՝ պատվիրեք խոզի խանձած գլուխ կամ տավարի քյալլա ու բոլորի առաջ վայելեք՝ քաղաքական թատրոնը կհասնի իր գագաթնակետին: Վարչապետ, կառավարության գլուխ, խոզի տոտոխ, տավարի գլուխ: Ոչ միայն սնունդ կլլել կլինի դա, այլեւ քաղաքական ուժեղ ուղերձ: Ալիեւը կտեսնի, թե ինչպես է Հայաստանի վարչապետը խոզի ոտ ու տավարի գլուխ ծամում եւ այլեւս երբեք չի համարձակվի նույն սեղանի մոտ նստել նրա հետ: Չի կարող: Չի նստի: Կընդունի իր պարտությունը՝ ոչ թե պատերազմում, այլ՝ սեղանի շուրջ: Դուք ուտում եք այն, ինչին ինքը չի դիպչում: Դուք անցնում եք այն սահմանը, որն ինքը չի անցնի: Սա է ձեր «հաղթանակը»: Թող վախենա: Իսկ Դուք շարունակեք ուտելը: Վերջ, խփեցիք տասին:

Մի փոքր գործնական դիտարկում էլ: Ձեր ավտոբուսում անձեռոցիկ չկա: Ձեռքերն ինչո՞վ եք սրբում: Ժողովուրդը տեսնում է՝ դուք ուտում եք, յուղը հոսում է: Գուցե հենց դա է ձեր կառավարման մոդելը: Հիմա՝ մի այլ հարց: Ձեր գովազդային վահանակները կիսադատարկ են: Ինչո՞ւ: Լցրեք: Դարեհից ինչո՞վ եք պակաս: Նա ժայռի վրա էր գրում, դուք պաստառի վրա գրեք: Օրինակ՝ «Պարտվեցինք՝ պետություն ունեցանք», «Արցախը թոկ էր վզներիս», «Ինչքան հարկ տալիս եք՝ միայն շահում եք», «Ինչքան պարտվում ենք՝ այնքան հաղթում ենք»: Տիեզերական մտքեր՝ դարերի ծիրում հիշատակելի: Դրանք էլ ձեր «Բիհիսթունյան» ժայռագրությունները կլինեն:

Հիմա՝ ամենակարեւորը: Դուք ինքներդ եք ասել՝ եթե չընտրվեք, պատերազմ է լինելու: Այսինքն՝ Դուք եք խաղաղությունը: Դուք եք պատերազմը: Դուք եք պետությունը: Դուք եք սահմանադրությունը, օրենքը, դրոշը, հիմնը: Ամենը: Այս դեպքում՝ ինչո՞ւ ընտրություններ: Ինչո՞ւ նման ձեւականություններ: Ինչո՞ւ ավելորդ թատրոն: Մեր վսեմափայլ տեր, մի հրաման տուր՝ կարճ, հատու, սառը, վերջնական. «Հայաստանում այսուհետ ընտրություններ չեն անցկացվելու»: Վերջ: Ո՞վ ինչ պիտի ասի: Ալիե՞ւը: Նա արդեն տեսել է խոզի գլուխը: Պուտի՞նը՝ ղալաթ կանի: Իսկ Ձեր հավատացյալ զանգվածը շռնդալից կծափահարի: Մյուսնե՞րը: Թքած: Թող խոսեն: Սեմուշկա է: Չրթեք՝ էթա…

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am